

ՅԱԿՈՒ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

ՀԱՐԻՐԱՄԵԱՅ ՅՈՒԵԼԵԱՆ

ՎԵՐԱՇԻՆՈՒԹԵԱՆ

ՊԱՏՐԻԱՐՔԱՆԻՍ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ

ԳՈՒՄԳԱԲՈՒԻ

1828 ՀՈԿՏ. 1. — 1928 ՀՈԿՏ. 1



ԱՌՇԻՑՐԱԿԱՆ ՏՊԱՐԱՆՆԵՐ

Մ. ՅՈՎԱԿԻՄՅԱՆ

ՊՈԼԻՍ ԵՒ ԴԱՂԱԹԻԱ

1928

281.6

Կ-31

04 NOV 2009

2816

ՅԱԿՈՒ ՎԱՐԺԱՄԵՏԵԱՆ

Վ-31

ՀԱՐԻՒՐԱՍԵԱՅ ՅՈՐԵԼԵԱՆ

ՎԵՐՈՇԻՆՈՒԹԵԱՆ

ՊԱՏՐԻԱՐՔԱՆԻՍ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ

ԳՈՒՍԳԱԲՈՒԻ

1828 ՀՈԿՏ. 1 - 1928 ՀՈԿՏ. 1



ԱՌՆԵՏՐԱԿԱՆ ՏՊԱՐԱԿՆԵՐ


Մ. ՅՈՎԱԿԻՄՅԱՆ

ՊՈԼԻՍ ԵՐ ՂՆԼՍԹԻԱ

» 1928



2377



Ամեն. Տ. Մեսրոպ Ս. Աբեղա. Նարոյեան
Պատրիարք Հայոց Թուրքիոյ

Մեսրոպ ծառայ Յիսուսի Քրիստոսի, ողորմութեամբ Աստուծոյ Հօր եւ շնորհիւ Ս. Հագրոյն եւ կամօք Ազգիս Արեւաբակոպոս Կ. Պալսոյ եւ Պատրիարք Հայոց Թուրքոյ

Ա.Ռ Պատ. Թաղ. Խորհուրդն Մայր Եկեղեցւոյ ողջոյն սիրոյ եւ օրհնութիւն Աստուածային:

Եւ ընդ տիրաւանդ ողջունիս յայտ առնեմք եթէ՛ ապաքէն գովելի եւ շինիչ է գաղափարը, զոր ունեցաւ Պատ. Թաղ. Խորհուրդդ հանդիսութեամբ տօնելու Մայր Եկեղեցւոյ վերաշինութեան Հարիւրամեակը, պանծացնելու համար անմեռ յիշատակը Մեծանուն Հիմնադիր Պեզմեան Յարութիւն Ամիրայի:

Մայր Եկեղեցւոյ դարաւոր Պատմութիւնը լի է գեղեցիկ եւ փառաշուք դրուագներով, իբրեւ կենդանի վառարան մը հոգեւոր շինութեան եւ մտաւոր զարգացման: Հիմնադիրը, որ ազգս յին մեծ եւ ճշմարտ բարերարի մը լուսաւոր դէմքը կը ներկայացնէ, բարձր գիտակցութեամբ մը կառոյց այս հոյակերտ Տաճարը, որ իր բազմաթիւ բարեգործութեանց մէջ ամէնէն շքեղ կոթողն է, իբր մարմնացումը իր բարձր հատուցին, ազգասիրութեան եւ անզուգական նկարագրին:

Հետեւաբար, երախտագիտակցելով Շնորհք, զոր այսօր Ազգը մասնաւոր հանդիսութեամբ կ'ընծայաբերէ իր ամէնէն արժանաւոր զաւկին յիշատակին, արդար տրիտուրն է իր անփոխարինելի վաստակներուն, եւ որուն փառքին անշուշտ մասնակից են նաեւ այն ազնիւ հոգիները, որոնք Պեզմեանէն յետոյ սատար հանդիսացան յաւերժացնելու Աստուծոյ Տան գոյութիւնը:



55790-66

Կ'օրհնենք ուրեմն խնկելի յիշատակը այդ աստուածա-
 փէր մեծ հայուն, որ օժտեց հաւատացեալ Հայ ժողովուրդը
 հոյակերտ այդ տաճարով, որ սակայն միակը չէ անոր բա-
 րեպաշտ զգացմանց իբր առհաւատչեայ: Կ'օրհնենք նաեւ
 յիշատակը զայն պայծառ պահելու աշխատող բարերարնե-
 րուն. ու կը մաղթենք որ, ողորմութեանց Աստուածը ազ-
 գին ծոցէն անպակաս ընէ նոր Պեգճեաններ, կանգուն
 պահելու համար մեր եկեղեցիները, մեր կրթարաններն ու
 բոլոր մեր բարեսիրական հաստատութիւնները:

Այս պատեն առիթով կը նուիրենք նաեւ մեր օրհնու-
 թիւնները սուրբ եկեղեցւոյդ պայծառութեան համար աշ-
 խատող քահանայական Պատ. Դասուն, Թաղ. Խորհուրդի
 մեծայարգ անդամներուն, Դպրաց շնորհալի Դասուն եւ
 բոլոր բարեսէր թաղեցւոց եւ բարեպաշտօն ժողովրդեան:

Մնամք աղօթարար

Պատրիարք Կ. Պոլսոյ

ՄԵՆԱՐՈՊ ԱՐԻԵՊՍ. ՆԱՐԵՅԵԱՆ



ՊԵՂՆԵԱՆ (ԳԱՂԱԳ) ՅԱՐՈՒՔԻՆ ԱՄԻՐԱՅ



ՀԱՐԻՒՐԱՄԵԱՅ ՅՈՒԵԼԵԱՆ

ՎԵՐԱՇԻՆՈՒԹԵԱՆ

ՊՈՏՐԻԱՐՔՈՆԵՍ ՄՈՅՐ ԵԿԵԼԵՑԻՈՅՆ

ԳՈՒՄ ԳԱԲՈՒԻ

Պոլսահայութեան հետ դարերով կապուած այս Եկեղեցին, որուն վերաշինութեան Հարիւրամեայ Յորելեանք կը տօնուի տարւոյս Հոկտ. 1ին հանդիսաւորապէս այսօր կը ներկայացնէ մեր անցեալ ազգային կեանքին մէկ կարեւոր շրջանը: Մայր Տաճարը ոչ միայն բազմաթիւ սերունդներուն հոգեւոր ու բարոյական մխիթարութեան ու զայգացման վառարանն եղած է, այլև վկան հանդիսացած է պատրիարքութեան ուրախ ու տխուր օրերուն, իր սրբազան կամարներուն տակ ցոլացնելով Ազգին դարաւոր վսեմ ու նսեմ պատմութեան պրուագները:

Քումգաբուի երեք եկեղեցիները

Պատմութիւնը կը սովորեցնէ մեզ թէ, երբ Փաթիհ Սուլթան Մէհմէտ Կ. Պոլիսը յաղթութեամբ ձեռք ձգեց 1453ին, Անատօլուէն և Կիլիկիայէն Հայեր բերել տալով բնակեցուց Պոլսոյ զանազան կողմերը ու ասոնց վրայ Պատրիարք հռչակեց Պրուսայէն հրաւիրած Յովակիմ Եպիսկոպոսը. որ իրեն վազածանօթ բարեկամն էր եղած: Ուրոյն թաղամասերու մէջ զետեղուած Հայերը Ալթը

Ճեօնաւոր յորջորջուեցան, ինչպէս որ այս յորջորջուածը շեշտուած է այն ատեններ պատրիարքներու շնորհուած հրովարտականերու մէջ: Արդէն Պոլսոյ առումէն ալ առաջ Հայեր կային Բիւզանդական շրջանին և ունէին իրենց առաջնորդները և սակայն ասոնք նկուն դիրք մը ունէին և կ'ապրէին իբրև Հայ - Հոռոմ. նոյնիսկ եկեղեցւոյ կոչնակ զարնելու իրաւունքը զրացուած էր իրենց: Փաթիւնի օրով այս Հայերը սկսան լայն շունչ մը առնել և Պոլիս բերուած Հայ գաղթականութեան հետ հետզհետէ աճելով կարեւոր թիւ մը կազմեցին: Պոլսոյ Հայ գաղթականութեան սկզբնական վիճակին մասին դժբախտաբար պատմագրական տեղեկութիւններ կը պակասին, միայն ցրիւ և հատուկոտոր տեղեկութիւններ կը գտնուին: Ըստ այսմ Փաթիւնի կողմէ բերուած Հայեր նախ բնակեցուցուած են Թօփղարու կողմերը յատկապէս շինել տրուած տախտակեայ տաղաւարներու մէջ Օսալար անունով: Կ'երեւի ասոնք ազատ դասակարգի գործաւորներ էին որ Պալատի բազմերի Հայերէն Օսալարցի մակդիրով յորջորջուեցան, իբր յատկանշական՝ գոնիկ ու սինլքոր դասակարգի մակդիր մը՝ որ ցարդ կը գործածուի մասնաւորաբար իգական սեռին մէջ, «ինչ օտաւարցի կնիկ է որ...»: Մեր խնդրանաց վրայ վաղեմի հրապարակագիր և բանասէր Տիար Նշան Ճիվանեանի (Հորոյ) տուած այս տեղեկութենէն ետքը, աւելցնենք որ, Հայերուն մէկ մասն ալ բնակեցուցուած էր Ախքը Գաբուի կողմերը, որոնք հետզհետէ աճելով ու տարածուելով շրջակաները մինչեւ Գումգարու, Լանկա, Կարեւոր թիւ մը կազմեցին: Թէ Հայերը այն ատեններ քանի եկեղեցի ունէին, յայտնի չէ, միայն հետզհետէ կը յիշուին Ս. Սարգիս, Ս. Լուսաւորիչ, Ս. Նիկողայոս և Ս. Աստուածածին եկեղեցիները: Նոյնպէս Ս. Գէորգ, որ տրուած էր Գարամանէ Պոլիս բերուած Հայերուն, որոնց բնակութեան տեղ սահմանուած էր Սամաթիա (1479): Այս վեց համայնքին կազմութիւնը գոնէ վեց սկզբնական

եկեղեցիներու գոյութիւնը կը պահանջէր, ըստ որում ամէն հասարակութիւն կամ համայնք կամ թաղ՝ տաճկական ըմբռնումին համաձայն իր աղօթատեղիով կը ստանար իր ուրոյն կազմութիւնը: (1) Ինչպէս Սամաթիոյ Ս. Գէորգ եկեղեցին, ուր հաստատուած էր նաև Պատրիարքարանը:

Ս. Սարգիս եւ Ս. Նիկողայոս

Գումգարուի մէջ Հայերը ունեցած են երեք եկեղեցիներ. ասոնցմէ մին է Ս. Սարգիս որ կը գտնուէր «մերձ ի դուռն ենիգաբուի ի Հիսար Տիպի», ըստ Սարաֆ Սարգիս Դպիր Յովհաննէսեանի տեղեկութեան: Այս եկեղեցւոյն սկզբնաւորութեան թուականը չէ ճշգրտուած, կարծողներ կան սակայն թէ, ան Բիւզանդական շրջանէն մնացած ըլլայ: Հ. Մ. Չամչեան միայն կ'ըսէ թէ, 1658ին այս եկեղեցին կիսաւեր ըլլալով արդէն, թլթլեաններ զայն բոլորովին աւերեր ու անոր արծաթեայ և պղնձեայ սպասները կողոպտեր ու ծախեր են իրենց անձնական վրէժխնդրութեան ու հաճոյից ծախսելով (2): Այս եկեղեցին անգամ մըն ալ 1700ին կամ անկէ քիչ առաջ քանդուած է: Իսկ Ս. Նիկողայոսի եկեղեցին կը գտնուէր Ս. Սարգիսի ձախակողմը, «մերձ ի բաղանիս անդ որ կոչի Չինիլի Համամ»: Ժամանակակից Ամիրտովլաթ, որ Ամասիացի նշանաւոր բժիշկ մըն էր 15րդ դարուն մէջ, թողած է երկու թանկագին յիշատակարաններ (3): Ասոնցմէ մէկը 1474ին տաճկերէնէ ի Հայ լեզու թարգմանած ԳիՌԳ ՌԱՄԿԱԿԱՆԻ և միւսը 1478ին թարգմանած ԱՆԳԻՏԱՅ ԱՆՊԷՏԻՆ բժշկարանին մէջ են: Առաջին յիշատակարանին մէջ

(1) ԱԶԳԱՊԱՏՈՒՄ Բ հատոր, էջ 2185-86:

(2) Չամչեան Հ. Միքայէլ, Պատմ. Գ. Հատոր, էջ 678-9:

(3) Ստամպոլայ Պատմ. Երեմիա Չելեպի. Տօքթ. Վ. Յ. Թորօ գումեան, էջ 279:

կ'ըսէ. «Ի Կաթողիկոսութեան Տր. Սարգսին և ի Հայրապետութեան Տր. Յովակիմայ արհիեպիսկոպոսին ի մայրաքաղաքն ի Կոստանդնուպոլիս, ընդ հովանեաւ Սրբոյն Նիկողայոսի Սքանչելագործի և ի Թուակահուութեան Հայոց ԱԻԳ ամին (923+551=1474) եւլն.» իսկ երկրորդին մէջ շրջապատութեան Սուլթան Մուհամմէտ Խանին և ի Կաթողիկոսութեան Էջմիածնին Տր. Սարգսին և ի Հայրապետութեան ի մայրաքաղաքն ի Կոստանդնուպոլիս Տր. Նիկաղայոսի և ի Թուին Հայոց ԱԻԷ 1478 առ զրանն Սրբոյն Նիկողայոսի Սքանչելագործ Հայրապետին եւլն.» Ասոնք ցայտուն ապացոյցներ են որ Հայոց Ս. Նիկողայոս եկեղեցին կը գտնուէր Գուճաբու և պէտք չէ շփոթել Էտիրնէ Գաբուի Ս. Նիկողայոսին հետ. քանի որ նշանաւոր բիւզանդագէտ Տօքթ. Պասպատի 1877ին հրատարակած ուսումնասիրութենէն ալ կը հասկցուի թէ, Գուճաբուի Ս. Նիկողայոսը հին է Էտիրնէ Գաբուինէն: (1) Ամիրտովլաթ իր Յիշատակարաններուն մէջ ալ կը յիշէ Ս. Աստուածածին եկեղեցի մը, որուն մասին պիտի խօսինք ի ստորեւ: Գուճաբուի Ս. Նիկողայոս եկեղեցին մէջ հաստատուած է առաջին տպարանը Աբգար Դպիրի կողմէ և պատմագիր Մաղաքիա Չէլէպի ձեւակերպեան կը յիշէ որ այդ տպարանէն հրատարակուած են վեց գիրքեր, որոնց երկուքին յիշատակութիւնը յայտնի է. մէկը 1567ին տպուած ՓՈՒՔՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՆ մէջ, իսկ միւսը 1568ին տպուած ՏՕՆԱՅՈՅՅԻՆ մէջ: Ասոնցմէ զատ տպուած են նաեւ ԺԱՄԱԳԻՐՔ, ՊԱՏԱՐԱԳՈՒՄԱՏՈՅՅ և ՊԱՐԶԱՏՈՒՄԱՐ: Այս Ս. Նիկողայոս եկեղեցին մէջ վախճանած է Ստոյ Թորոս Բ. Կաթողիկոսը, որ աթոռապատկան գործոց համար իր կաթողիկոսութեան երրորդ տարին Պոլիս եկած է ու հաստատուած այս եկեղեցին: Թորոս Կաթողիկոս, Պատրիարքարանի շուրջ տեղի ունեցած ազգային գործոց

(1) Ստանպոլայ Պատմ. Երեմիա Չէլէպի, էջ 281:

բարուք կարգադրութեան մասին ալ իր ազդեցութիւնը ունեցած է: Հանդուցեալ Կաթողիկոսին յուղարկաւորութիւնը խիստ փասաւոր եղած է ու թաղուած Պալքուրի ազգ. գերեզմանատունը: Թորոսի մահը կը պատահի 1657 Ապրիլ 29ի Չորեքշաբթի օրը, որուն օձման և յուղարկաւորութեան նկարագրութիւնը գրուած է Երեմիա Չէլէպիի կողմէ և ՍՍՏՂԻԿ ԱՐԵԻԵԼԵԱՆ օրագրին մէջ (1):

Այս երկու եկեղեցիները, որոնք այժմ գոյութիւն չունին և տեղերնին ալ անյայտ է, ծանօթացնելնէս ետքը ըսենք թէ, 1652ին Ս. Սարգիս եկեղեցին առաստաղը կ'այրի և կը նորոգուի հակառակ Քիլիսե Տեյիսի յարուցած խոչընդոտներուն: 1660 Յուլիս 14ին սոսկալի հրդեհ մը մոխրակոյտի կը վերածէ ինը յոյն եկեղեցիներու հետ նաեւ Ս. Սարգիս և Ս. Նիկողայոս եկեղեցիներն ալ: Գուճաբուի Ս. Աստուածածին եկեղեցին հազիւ կ'ազատի այս հրդեհէն: Ստեփաննոս Մուղնիցի Վարդապետ, յետոյ Պատրիարք, իբր ականատես, նամակի մը մէջ կը յիշէ այս հրդեհը: (2) Իսկ Մեղրեցի Յովհաննէս կը գրէ թէ հրդեհը սկսած է յամսեանն (սաճեռորդի եւ նախկնորդի յաւուր Շաբաթու: (3) Այս հրդեհը երեք օր կը տեւէ և քաղաքին հիւսիսային կողմէն սկսելով մինչև միջավայրին դագաթը կը տարածուի ու երկու կողմերէն ծովեզերքները իջնելով, իբր 30,000 տուն ու 3000 անձ կ'այրին. այս հրդեհին մէկ ծայրը դադարած է «ի դռնն աւագակոչակաճի իմա Գուճաբուի, վախճան առեալ առ դուռն վաճից», այսինքն Պատրիարքարանի ու այս կելպրով կ'սկստի Ս.

(1) ԱՍՏՂԻԿ ԱՐԵԻԵԼԵԱՆ, Օրագիր, Կ. Պոլիս, Ա. տարի, 1 Մայիս 1875, էջ 75-78 և Տօքթ. Վ. Յ. Թորգոմեան Երեմիա Չէլէպիի ծանօթագրութիւնները:
 (2) Ընդրձ. Օրացոյց Ազգ. Հիւ. տարի 1901, էջ 103:
 (3) Պատմ. Առաքել Վրդ.ի Թավրիթեցոյ, 1884, էջմիածին:


Աստուածածին եկեղեցին: Ս. Նիկողայոս անգամ մը այրելէն տարի մը առաջ գրաւի տակ կ'անուի պարտքի փոխարէն, բայց Մարտիրոս Պատրիարքի երաշխաւորութեամբ կը վերաբացուի: Ապրօ Սահակ անուն ազգային մը Ս. Նիկողայոսի գետինը կը գնէ ու 1662ին աւելի փառաւորը կը վերաշինուի թէեւ, Այնթապցի եղիազարի մասնակի ծախքովը, սակայն նոյն տարւոյ Մարտ 30ին հիմնայատակ կը քանդուի: (1)

Գումգաբուի Ս. Ասուածածին Մայր եկեղեցին

Ինչպէս ըսինք վերը, Գումգաբուի երեք եկեղեցիներէն մէկն ալ Ս. Աստուածածին եկեղեցին է: Առաջին հիմնարկութեան թուականը չէ ճշդուած, բայց հաւանական կը նկատուի որ 1640էն շատ առաջ գոյութիւն ունեցած ըլլայ: Ամիրտովլաթ բժիշկին ձեռագիր մէկ Սաղմոսը՝ (2) որ 1480ին ի Պոլիս Մարտիրոս Աբեղայի կողմէ ընդօրինակուած է, ունի Յիշատակարան մը, ուր գրուած է. «Արդ գրեցաւ սա ի թվ. ՋԻԹ (929+551=1480) ի յամսեանն Յուլիսի, Մեծահամբաւ Կայսերանիստ քաղաքին Ստամպուլայ, ի Դուռն Չարախսփան Ս. Աստուածածնի», եւ ըն. : Այս Յիշատակարանի մէջ կը յիշուի նաեւ որ, երբ Փաթիհ պատերազմի գնաց Ուզուն Հասանի վրայ ու յաղթեց անոր, վերադարձին (1479) Գարամանցի Հայեր բերաւ Պոլիս, որոնց մէջ կար նաեւ այս Մարտիրոս Աբեղան, «առ սոս Սուրբ Վարդապետին մերոյ Տէր Մաթէոսին Սեբաստացւոյ և Աբրահամ Վարդապետի Տրապիզոնեցւոյ և զտքա ալ Խանդարն (Հիւնքեարն) բերեալ էր վասն Պատրիարքութեան համար և սոքա ոչ առին յանձն լաւ

(1) Պատմ. Չամչեան, Գ. հատոր, էջ 691 692:

(2) Յիշատակարան Ամիրտովլաթ Սաղմոսին, «Հանդէս Ամսօրեայ» 1895, էջ 248:



Մայր եկեղեցւոյ եւ Պեգնեան վարժարանի արտաքին տեսարանը

որուն մէջ Չեռագիր Աւետարանի մը յիշատակութիւնը եղած է սա արձանագրութեամբ. «Առաջին երես արձաթագատ խախմայ Ծննդեան Պատկերիւ: Յիշատակ է Սարբերոցի Մանտեսի Սէֆէրին, Մէնէպին, Մհտ, Սմիր Յովհաննէսին, Պաղտատարին, Սիմաւոնին, Կիւրճիին, զգահարն որ ստացան զսա հալալ ընչից իւրոց ԶԺԴ թուոյն 914+551=1465» Թէև այս Սուրբ Մատեանը ո՛ր թուականին նուիրուեր է, յայտնի չէ, սակայն արդեօք չէ՞ կտրելի ենթադրել որ Յաթիհի օրով Անատոլուէն Պոլիս բերուած այս բարեպաշտ-գաղթականները հետերնին բերած ըլլան ու նուիրեն Գուճգարուի երեք եկեղեցիներէն մէկուն, ուր մնացեր է երկար տարիներ: Մեր այս ենթադրութիւնը կը հիմնենք մանաւանդ այն կէտին մասին որ քիւթիւկին գրեանց ցուցակագրութեան մէջ այդ Մատեանները յիշուած են միջայն նուիրողին անունով և այն ատեններու յատուկ գիրքերուն վերջը գրուելը սովորական եղած Յիշատակարաններու արձանագրութիւնք չեն նշանակուած:

Այս եկեղեցին 1643ին կ'այրի և տարի մը վերջը Արեւելցի Դաւիթ Պատրիարքին օրովը կը վերաշինուի աւելի փառաւոր: Տիւրիկցի Պողոս Վարդապետ զլուխ կը կանգնի շինութեան գործին: Երեմիա Չէլէպի իր տարեգրութեան մէջ կ'ըսէ. «առ ի շինութիւն տանս հոգւոյ փութային սիրով, վաղվաղէին բաղձանօք, տրիւք և գոյիւք ոչ միայն արք, այլև կանայք բաց յարանց թոպէին որպէս զգործաւորս և զմշակս ի բառնալ և ի կրել ցեխից և նիւթից շինուածոց՝ եւեթ զկատարումն նորա տեսանել» և կ'աւելցնէ թէ Տիւրիկցիներու ջանքով շինութեանէն գոյացած պարտքը վճարուելէ ետքը, գրամ ալ աւելցեր ու անով եկեղեցին զարդարեր են անօթներով և սպասներով: Նորաչէն եկեղեցիին օձուճը կը կատարուի «բազմախումբ քաղաքիս ժողովրդովն»: 1660ին պատահած մեծ հրդեհէն, ինչպէս յիշեցինք վերը, Ս. Աստուածածին եկեղեցին հա-

զիւ կ'ազատի. Երեմիա Չէլէպի այս հրդեհին մասին կ'ըսէ. «Զսա չըջապատեաց մեծ հուրն, փրկեցաւ ինքն մեծ հրաշական»:


1718 Յուլիս 5ին Հոգեգայտեան հինգերորդ Կիրակի լուսնալու գիշերը այս եկեղեցին նորէն կ'այրի, բայց տարի մը վերջ կը վերաշինուի Յովհ. Կոլոտ Պատրիարքի օրով: Ժողովուրդը դարձեալ եռանդեամբ կը փարի այս վերաշինութեան գործին և Կոլոտ ու այն ատեն Պոլիս գտնուող Երուսաղէմի Շղթայակիր Գրիգոր Պատրիարքները գործաւորներուն հետ իբրև մշակ կ'աշխատին, որոնց աջակից կ'ըլլան նաև արքունի ճարտարապետ Մհտ. Սեղբոս, Մհտ. Մելիտոն Արապոզլու և Սարգիս Գալֆա: 70 օրուան մէջ կ'աւարտի շինութիւնը և Շղթայակիր Գրիգոր, որ Եպիսկոպոսական աստիճան ունէր, գիշերանց կը կատարէ օձուճը: Ամբողջ չէնքը կը բազկանայ երեք տաճարներէ, միջինը Ս. Աստուածածին, և երկու քովերն ալ Ս. Յակոբ և Ս. Սարգիս անուններով: Այս Ս. Սարգիսը Դուրսի ժամ կը կոչուի: (1): 1718ի հրդեհը կը տեւէ 34 ժամ և Պոլսոյ մեծ մասը մսխրակոյտի կը վերածէ. այս հրդեհէն այրած է նաև Պատրիարքարանն ալ: Հաննա Պատմագիր կ'ըսէ որ, Կոլոտ ու Շղթայակիր յուսակտուր կ'ըլլան, սակայն ազգին մեծամեծները տոանց յուսահատելու գործի կը լծուին, նախ Մայր եկեղեցին ու ապա Պատրիարքարանը կը շինեն: Ահա այս թուականէն սկսեալ Ս. Աստուածածնայ եկեղեցին ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ կը կոչուի:

1762ին կրկին հրդեհ մը կը պատահի ու Մայր Եկեղեցին մեծապէս կը վնասուի. չուտով սակայն կը նորոգուի «խնամատարութեամբ Բահիպ փառային» և Նախան Յակոբ Պատրիարքի շնորհիւ: Սարգիս Գալիւ Սարաֆ Յովհաննէսեան իր Յիշատակագրութեան մէջ կ'ըսէ թէ հրդեհը կ'սկսի

(1) Աշխրհ Չորից Մասանց, 2. Դ. Ին ճիճեան, 1-04, վենետիկ շատար Ե., էջ 129.

Պայազիտի Պուղտայճըլար Գարուսիէն ու կ'իջնէ վար, Նիշանճի բաղնիքը կ'այրի և կը շարունակէ մինչեւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ շուրջ ու այրելով Հայոց տուները՝ կը հասնի Հիսար Տիպի. այս հրդեհը կը տեւէ 24 ժամ: Սարգիս Դպիր սա հետաքրքրական տեղեկութիւնը կուտայ. այն ատենուան Պոստանճի Պաշին, տեսնելով որ եկեղեցին փրկելու ճիգ կը թափուի, բռնի և հայնոյանքներով դուրս հանել կուտայ ջրհանկիրներն ու երբ բարձր չէնքէ մը կը դիտէր հրդեհը, այդ չէնքն ալ կ'այրի ու կը փլչի ու ինքը վար իյնալով բարձրութենէն՝ կը մեռնի: Մայր եկեղեցւոյ այս նորոգութեան միջոցին կը շինուի նաեւ Երուսաղէմատուներ, որ այրած էր: Նալեան Պատրիարք գեղեցկապէս զարդարել կուտայ Դուրսի ժամը գտնուած Ս. Նիկողայոսի Խորանը, որ, ըստ Սարգիս Դըպրին, շինուեր է 1712ին և, ըստ Ինճիճեանի, Գրիգոր Պասմաճեան Պատրիարքի օրով (1767) քանդուեր է թէ՛ այդ խորանը և թէ՛ երեք խորաններու կամարները:

1782ին Մայր եկեղեցին դարձեալ մազապուր կը փրկուի պատահած հրդեհէն: Կողղուանցի Զաքարիա Պատրիարք որ, ըստ «Ազգապատում»ի նկարագրութեան, «երկար հասակաւ, գեղեցիկ, անեղակերպ, լայներես և լայնաճակատ ու մազոտ — այս պատճառաւ Գրիգոր Բաբրիկ կը կոչէին զինքը — կորովի ու նկարագրի տէր, ազգին պատուոյն և եկեղեցւոյ պայծառութեան նախանձախընդիր, ուսման նուիրեալ ու գաստիարակութեան հետապնդող և իր նպատակին հասնելու համար դժուարութենէ չի խորշոզ և ուժգին միջոցներէ չի խուսափող անձ մըն էր,» զպրոցներ բացած ու աշակերտներ հասցուցած է. սա Մայր եկեղեցւոյ կից դպրոցի մը մէջ ուսուցչութիւն ըրած է. Գումգարուի Ֆրչըճի թաղին մէջ առաջին թաղային վարժարանը ինք բացած է շնորհիւ առատաձեռնութեան Շնորհք Ամիրայի. Զաքարիա՝ Մայր եկեղեցւոյ շրջափակը որմափակած և եկեղեցին հրդեհէ փրկելու համար



ԶԱԲԱՐԻԱ ՊԱՏՐԻԱՐՔ
1782-99

հաստատած է մնալուն ջրհան մը ջրհանկիրներու խումբով և պատրաստ ջուրի ընդարձակ աւազան մը: Այս ծախքերուն համար ալ իր անձնականէն 20,000 զշ. նուիրած է: Ասկէ զատ Մայր Եկեղեցւոյ կտակած է իր Եպիսկոպոսական զգեստը, որուն ծախսած էր 35,000 զշ.: Զաքարիա վախճանեցաւ 1781ի ատենները՝ Մեծ Պահքին, որուն հոգւոյն ի հանգիստ Պոլսոյ բոլոր եկեղեցիներուն մէջ 3, իսկ Մայր Եկեղեցւոյն մէջ 40 օր բաց Պատարագ մատուցուեցաւ:

1819ին Ազրիանուպոլսեցի Պօղոս Պատրիարքին օրովը նորոգութիւն մը եւս կը կրէ այս եկեղեցին, որուն զուլիս կը կանգնի Պեղճեան Յարութիւն Ամիրայ և ազգին մեծամեծները կ'աջակցին անոր: Օծուժը տեղի կ'ունենայ 1820 Փետր. 25ի Զորեքչաքթի օրուան առաջին գիշերէն սկսելով մինչեւ Փետր. 26ի կէսօրը: Արարողութիւնը չորս անձի վրայ կը բաժնուի անշուշտ յոգնութիւնն ալ նկատի առնուելով: Պօղոս Պատրիարք միջին տաճարը, Կիրակոս Կաթողիկոս հարաւակողմի Ս. Որդւոց Որոտման, Աստուածատուր եպիսկոպոս հիւսիսակողման Ս. Խաչի եկեղեցիները, Դիոնիսիոս եպիսկոպոս միջին տաճարն զաւրթը կ'օծեն: Արարողութեան երկար տեւողութիւնը կը ցուցնէ թէ չորս օծումները իրարու ետեւէ կատարուած են, ամբողջութիւնը միեւնոյն օրը լրացնելու համար (1): Մայր Եկեղեցւոյ գանձատան մէջ պահուած կայ այս շինութեան առթիւ եղած ծախքերուն մէկ տետրակը, ուրկէ կը քաղենք հեռեւեալները. — Շինութիւնը կը սկսի 1819 Դեկտ. 1ին և կ'աւարտի 1820 Փետր. 19ին: Իսկ Պատրիարքարանի շինութեան կը ձեռնարկուի 1918 Դեկտ.էն սկսեալ: Եկեղեցւոյ շինութեան ծախք կ'ըլլայ 525,800 զշ., իսկ հին և նոր Պատրիարքարաններու շինութեան համար ալ 125,911 զշ.: Շինութեանց շանդանակութենէն կը գոյա-


(1) Աղգապատում, Գ, հատոր, էջ 3460 61:

նայ 168,669 զչ., որուն 10,000ը կը նուիրէ Պողոս Պատրիարք Պատրիարքարանի շինութեան յատկացնելով: Իսկ Ամիրաները 50,902, էսնաֆ դասակարգը 76220 զչ. կը նուիրեն: Երուսաղէմի Վէճիլ Մինաս եպիսկոպոսն ալ անձամբ հանգանակութիւն կը կատարէ: Պատրիարքարանը կը շինուի ճարտարապետ Գրիգոր Ամիրայի փեսայ Յովհաննէս աղայի ձեռքով: Տետրակին մէջ արձանագրուած է. «Այս ծախքը եղած է հաւանութեամբ և գիտութեամբ և հրամանաւ Սրբազան Պատրիարքին և բոլոր Գերապետի և աստուածասէր ազնուապերճ Ամիրայ յարգելեաց ձեռամբ Սրբոյ եկեղեցւոյս Միւթէվէլլի Սարաֆ Մնաց Մարտիրոսի և բոլոր եկեղեցպանաց. Տէր Պետրոսեան Մնաց Յովհ.ի, Սարաֆ Մնաց Անտոնի, Սարաֆ Յակոբի, պամմաճի Մնաց Ստեփանի, քէրէստէճի Մկրտիչի և քէրէստէճի Պետրոսի»: Այս արձանագրութեան ներքեւ կը գտնուին ասոնց ստորագրութիւններն ու կնիքները:


Արդի Մայր Եկեղեցիին վերաբնութիւնը

Դժբախտաբար այս շինութիւնները, որոնց համար այնքան նիւթական զոհողութիւններ եղած և աշխատանքներ թափուած են, հազիւ վեց տարուան կեանք մը կ'ունենայ և 1826 Օգոստոս 18ին կ'այրի Պատրիարքարանի և Երուսաղէմատան հետ: Պեղճեան Յարութիւն ամիրայ, բարեգործ, բարեպաշտ, եկեղեցասէր անձ մըն էր և մեծ հոգակ հանած էր իր բազմաթիւ բարեգործութիւններով և իր ճարտար ու ճարտարաց, խոհական և լուրջ ընթացքով ազգին և պետութեան մեծ ծառայութիւններ մատուցած էր. ան կը վայելեր Սուլթան Մահմուտի և իր աւագանիին համակրութիւնն ու վստահութիւնը: Պեղճեանի սիրտը կը կսկծար տեսնելով եկեղեցիին մոխրակոյտը ու կը փափաքէր որ վերաշինուի ան: Կիրակի օր մը, ինչպէս կը պատմէ Պեղճեանի կենսագիր Ստեփան Փափաղեան, Յարութիւն Ամիրայ եկնիգաբուի բաղնիքը կ'երթայ և կը

99-66755



Մայր Եկեղեցւոյ Աւագ Տաճարին Միջնագուռը



Աւագ Տաճարին Ս. Սեղանն ու Գուռը

մեծ գրք. Գրադարան
Гос. Библиотека
71100-Арм. ССР

պատահի որ նոյն միջոցին ալ կանչուի Սուլթանէն: Ամիր-
բան կը փութայ պալատ և Սուլթանը, որ տեղեկացած էր
նախապէս Ամիրային բաղնիք երթալը, կը հարցնէ.

— Բաղնիքին մէջ հանգիստ էիր, Արթի'ն:


Պեզճեան, որ առիթէն օգտուիլ գիտէր, անմիջապէս
կը պատասխանէ.

— Տէր Արքայ, տակաւ'ն այրած եկեղեցին տւերակ
մնացած ըլլալով, այսօր ցուրտ ու խոնաւ օդին մէջ գըլ-
խաբաց կ'աղօթէի, մտեցայ ու բաղնիք գացի:

Սուլթանը կը ծիծաղի Ամիրային այս պատրաստաբա-
նութեանը վրայ ու հրաման կ'ընէ որ եկեղեցին առջինէն
աւելի փառաւոր շինուի: Պեզճեան այս բերկրառիթ լուրը
խսկոյն կը հաղորդէ օրուան Կարապետ Պատրիարքին:
Արքունական հրովարտակը 1828 Փետր. 2ին կը շնորհուի:
Պեզճեան իր մօտ կը հրաւիրէ արքունի ճարտարապետ
Գրիգոր Ամիրան, և ճարտարապետ Մ. Տէվլէթ Կարապետը
ու անոնց գծագրել կուտայ եկեղեցւոյ յատկագծերը:
Փետր. 10ին կը կատարուի հիմնարկէքը և շինութիւնը ե-
ռանդեամբ ու փութաշանութեամբ առաջ տարուելով կ'ա-
ւարտի Սեպտ. 1 վերջը: Եկեղեցւոյ կառուցուածքը կ'ըլլայ
իրաւամբ փստաւոր ու ընդարձակ. բացի երեք մեծ և ե-
րեք ալ փոքր եկեղեցիներէ, աւանդատուններէ և պահա-
րաններէ, կը շինուին նաեւ Հայ լեզուի դասախօսութեան
համար Ուսումնարան մը, աղքատիկ ժանկանց ձրի կրթու-
թեան համար, ինչպէս նաեւ երաժշտութիւն սովորելու
համար երկու վարժոցներ, Ուսումնարանին քովը մեծ ա-
ւազան մը՝ պատրաստ ջրալից ու անոր քովը հրչէջ ջրհան-
ներու և ջրհանկիրներու սենեակներ: Այս վերջինները
այժմ գոյութիւն չունին, անոնց գետնին վրայ շինուած
ըլլալով արդի հոյակապ վարժարանը Էջնահան ու Թազ-
շանճեան բարերարներու կողմէ: Բաց աստի Պեզճեան կը
զիտէ որ շատ մը Հայեր Հանկայի Յունաց Ս. Թորոս եկե-
ղեցին կ'երթան՝ հոնտեղի Այազմային ուխտ ընելու, ինքն

ալ շինել կուտայ Մայր Եկեղեցւոյ մէջ Այազմա մը՝ յանուն Սրբոյն Թէոդորոսի, ուր կը գտնուի նաև ջուր և տարին մի անգամ պատարագ կը մատուցուի Ս. Թէոդորոսի տօնին օրը: Այազմայի այս տաճարը, Ս. Յարութիւն մատուռին մէջ Պեղծեանի դամբարանին քովէն 17 ոտք սանդուխով գետնափոր տեղ մըն է: Եկեղեցիին դիմացն ալ կը շինուի Պատրիարքարանն ու Երուսաղէմատունը իր ընդարձակ սենեակներով: Պատրիարքարանը, որ մասնակի նորոգութիւն մը կրած էր Օրմանեան Պատրիարքի ջանքով, կը փլցուի 1913ին և արդի Պատրիարքարանը կը շինուի ի հիմանէ ժամանակին պահանջումներուն համաձայն, իսկ Երուսաղէմատունը, որ վերջերս գաղթական Հայոց բնակութեան սահմանուած էր, խարխլած վիճակ մը ունենալով, փլցուած է ու այսօր գետինը միայն կայ յիշեցնող Երուսաղէմատան անցեալ փառքերուն յիշատակը:

Նորակառոյց եկեղեցիին օծումը կը կատարուի աննախընթաց հանդիսութեամբ 1828 Հոկտ. 14ին. միջին տաճարը կ'օծէ Կարապետ Պատրիարք յանուն Տիրամօր Ս. Կուսին ի պատիւ հրաշալի Վերափոխման, հիւսիսակողմինը կ'օծէ Աստուածատուր արքեպս. յանուն Ս. Խաչի, հարաւակողմանը կ'օծէ Երեմիա արքեպս. յանուն Որդւոց Որոտման: Մայր և Ս. Խաչի եկեղեցիներն անջրպետող եկեղեցին կ'օծէ Երուսաղէմի Պատր. Փոխանորդ Յովհաննէս վարդապետ՝ յանուն Հրաշափառ Ս. Յարութեան Բրիտոսի ի խնդրոյ Պեղծեան ջերմեռանդ Ամիրայի: Որդւոց Որոտման եկեղեցիին կից եկեղեցին կ'օծէ Պոլսոյ Պատր. Փոխանորդ Բարթոլոմէոս վրդ. յանուն Ս. Ծննդեան և վեցերորդը, որ Ս. Խաչի հիւսիսային կողմը կ'իյնայ, կ'օծէ Անդրէաս վրդ. յանուն Ս. Հրեշտակապետի, որ փլցուած է այժմ: Այս մեծազանգուած շինութեանց համար կը ծախսուի երեք միլիոն զշ., ինչ որ այն ատենի համար շատ մեծ և կարեւոր գումար մըն է: Եղած նպաստները երկու միլիոնի կը հաւնի, որուն կէս միլիոնը կը վճարէ Պեղ-



Ասեփանցոս Աղաւնի Պատրիարք

ձեան: Պեղձեան այս առթիւ կտակագրութիւն մը կը պատ-
 րաստէ, զոր նոյնութեամբ մէջ կը բերենք: Այս կտակա-
 գրին ընթերցումէն արեւի պէս ցոլանալը կը հասկցուի ա-
 նոր բովանդակ էութեան վեհանձնութիւնը և հոգւոյն ազ-
 նութիւնը, սէրն ու գուրգուրանքը և նախանձախընդ-
 րութիւնը հանդէպ Եկեղեցիին և ազգ. դաստիարակու-
 թեան, որուն համար չի խնայեր ոչ մէկ ջանք և իր անձ-
 նական ազդեցութիւնը կը դնէ ուրիշներն ալ մղելու եկե-
 ղեցասէր և կրթանուէր գործերու: Ահա այդ կտակագրու-
 թիւնը, որ միեւնոյն ատեն կը պարունակէ շինիչ ու հրա-
 հանգիչ դասեր ալ:

Է.

ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ԾԱՌԱՅ

ԿԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏ

ՊԱՏՐԻԱՐԲ Կ. ՊՈԼՍՈՅ

ՌՄՀԲ

ԿՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Կամօք և Ողորմութեամբն Աստուծոյ, ես ծառայ
Քրիստոսի Յարութիւն Պեղճեան զայս կտակ հաստատեմ
մշտնջենաւոր և անփոխադրելի կամօք: Արդ, քանզի մար-
դասէր խնամօք Արարչին զեր քան զառաջինն պայ-
ծառ կառուցաւ Ս. Աստուածածին Մայր Եկեղեցին մեր,
յցաւ փափաք իմ. զի որպէս անհնարին եղև կսկիծ սըր-
տիս ընդ հրկէզ լինելն նորա, նոյնպէս անչափ եղև ու-
րախութիւն իմ ընդ սքանչելայէն նորոգութիւն նորա:

Օրհնեալ է Բարեխնամն Աստուած. որ արժանի արար
զիս և կարողացոյց աշխատութիւն ընդ միասիրտ եղբարց
իմոց Գերապատիւ Ամիրայից առնուլ հրաման շինութեան
Սուրբ Եկեղեցւոյս յարքունուստ, յիմոց անտի մատուցա-
նելով զվայելուչ մեծագին ընծայս մեծամեծ Նախարարաց
որոց էր հարկ, և ըստ փափաքանացս իմտատիյէ շնորհել
Եկեղեցւոյս թէ ի սկիզբն շինութեան, և թէ զկնի յերկ-
րորդ և յերրորդ հաւաքման իմտատիյէի յազգէն, և զու-
մարն զոր ետու յիմոց անտի եղև իբր հազար Քսակ, թէ
յայտնի և թէ անյայտ, որպէս ի Տումար շինութեան Սուրբ
Եկեղեցւոյն գրեալ կան մի ըստ միոջէ:

Յայսմ յոյժ մխիթարեալ եմ, զի և գեղեցկայէն Խաչ-
կալք Սրբոց Խորանաց, և Վարագոյրք և զարդք նոցա,



մեծագին Սկիհք, Խաչք, Աւետարանք, Քչոցք, և Բուր-
վառք արձաթեայք, Եպիսկոպոսական և Քահանայական
զգեստք, Շուրջառք, Շապիկք, Ջահք և Կանթեղք արդ-
եամբք իմովք կազմեցան, որչ և արձանագրեալք կան ի
Քիւթիւկո Ս. Եկեղեցւոյն և Դպրաց:

Դերաստիճան եղև մխիթարութիւն իմ, զի և Ու-
սումնարանն գիտութեան ի պէտս Եկեղեցականաց, և Դըպ-
րատունն Չայնաւորի ի պէտս Դպրաց, եւս և Դպրատունն
աղքատ մանկանց իմով արդեամբք կառուցան, զի վասն
ծախուց շինութեան նոցա ետու Հարիւր և Քսան Հազար
Դրուշ, զայս ամենայն զԱստուծոյն ընծայեցի Աստուծոյ,
զի Ողորմութեան Նորին հանդիպեցայց և անմահական
տեսութեան:

Դպրատունն Խարթալու, զոր շինեաց Ազնուամեծար
Բարերարն իմ և Հայր Հոգելոյս Յովհաննէս Չելեպին Տիւզ-
եան, ի հնգետասան ամաց յետէ իմովս տրովք շահեալ լի-
նէր, որում այժմ հոգացայ կարգել մշտնջենաւոր հասոյթս:

Արդարեւ ուրախ եմ և մխիթարեալ յոյժ յոյժ ընդ զըր-
ուելս, քան զոր ժողովէի զբազում գանձս յարկեղ իմում,
զի սա ամուլ է և անբեր, իսկ զոր մատուցի զայս ամե-
նայն նուէրս ի փառս Ամենասուրբ Երրորդութեան, բազ-
մապատիկ առաւելութեամբ հաւատամ արդիւնաւորիք
ի Հանդերձելումն Երկնաւոր Բարութեանցն փոխարինու-
թեամբ:

Այլ սակայն Ս. Եկեղեցին տակաւին բռնաւորեալ
գոլով ծանրութեամբ պարտուց իբրև երկու հազար Քա-
կի, ի հեծել նորին լուսածին մօր իմոյ ի ներքոյ ծանր
պարտուցն, հեծէի և ես սրաիւ, ուստի ի թեթեւութիւն
պարտուցն բաց ի վերոյիշեալ նուիրացս և տրոց, դարձեալ
ետու կամաւ և յօժարութեամբ ի սեփական արդեանցս իմոց
գիտութեամբ Սրբազան Պատրիարք Հօր մերոյ, և Նազըր
Եղբարցս և Երեւելեաց Ազգիս Հազար երկու Հարիւր Քսակ
Դարզ ստակ Ս. Եկեղեցւոյ Միւթէվէլի Մահտեսի Մարտի-

ըստ Ամիրային որ և նա վճարեաց զպարտս Եկեղեցւոյն, որ Քէսէն հինգ Արուշ Փայրզով առեալ էր, և մշտնջենապէս Վախֆ արարի այսու օրինակաւ, Չորս Հարիւր Քսակ Ուսումնարանին Գիտութեան, Չորս Հարիւր Քսակ Դպրատանն աղքատ մանկանց, Երկու Հարիւր Քսակ Դպրատանն Չայնաւորի, Երկու Հարիւր Քսակ Դպրատանն Խարթաւու:

Որպէս զի Միւթէվէլլի Մայր Եկեղեցւոյն, որպէս այժմ Մանտեսի Մարտիրոս Ամիրայն Պաղտասարեան, նոյնպէս և յապագայ ժամանակս ո ոք գտանիցի Միւթէվէլլի, Քէսէին հարիւր Բարա շահոյն ամսոյ յամիս երեք հազար Արուշ շահ տացէ՝ անխափան մինչեւ յաւիտեան, հազար Արուշ Ուսումնարանի Գիտութեան, հազար Արուշ Դպրատանն աղքատ մանկանց, Հինգ Հարիւր Արուշ Դպրատանն Չայնաւորի, Հինգ Հարիւր Արուշ Դպրատանն Խարթաւու, և այսպէս ցորչափ կայ և մնայ Ս. Եկեղեցին հաստատուն, հաստատ մնացեն Ուսումնարանն ու Դպրատունքն:

Եւ թէպէտ Ուսումնարանն Գիտութեան Ազգային ժողովով կարգեալ ունէր ինքնեան ի Ս. Եկեղեցեաց յերաքանչիւր ամսոց Հազար Արուշ հասոյթ, այլ քանզի չէր բաւական ի ընուլ զծախս նորա, ուստի այժմ ի սոյն Վախֆ արարեալ զբամոցս կարգեցի նմա մշտնջենաւոր հասոյթ ամսոյ յամիս զվերոյիշեալ Հազար Արուշն, որպէսզի Գիրք, Թուղթ, Կերակուր և Հանդերձ, և այլ պիտոյք աշակերտելոց, որք անգանոր զօրն ողջոյն պարապին յուսումն գիտութեան ի պէտս հասարակութեան, հոգացին ըստ բաւականին:

Եւ հաստատեցի զայսոսիկ կանոնքս, նախ զի որպէս այժմ ես եմ Նազըր այս ամենայն Վախֆ արարեալ զբամոցս, նոյնպէս և յետ ժամանակի միշտ մինն յազգատոնմէ իմմէ լինիցի Նազըր յազգէ ազգ, մինչեւ ցմնալ միոյ տղայոց ազգատնմի իմոյ, սոյնպէս և Պատրիարքն ժամանակին յաջորդաբար լինիցի Նազըր մինչեւ յաւիտեան:

Երկրորդ, զի մինն ի մեծարու և ի բարերար իշխանաւորաց ժամանակին լինիցի Միւթէվէլլի Վախֆիս այ-

Միւթէվէլլի Մայր Եկեղեցւոյն, որպէս այժմ Մանտեսի Մարտիրոս Ամիրայն Պաղտասարեան, նոյնպէս և յապագայ ժամանակս ո ոք գտանիցի Միւթէվէլլի, Քէսէին հարիւր Բարա շահոյն ամսոյ յամիս երեք հազար Արուշ շահ տացէ՝ անխափան մինչեւ յաւիտեան, հազար Արուշ Ուսումնարանի Գիտութեան, հազար Արուշ Դպրատանն աղքատ մանկանց, Հինգ Հարիւր Արուշ Դպրատանն Չայնաւորի, Հինգ Հարիւր Արուշ Դպրատանն Խարթաւու, և այսպէս ցորչափ կայ և մնայ Ս. Եկեղեցին հաստատուն, հաստատ մնացեն Ուսումնարանն ու Դպրատունքն:

Եւ թէպէտ Ուսումնարանն Գիտութեան Ազգային ժողովով կարգեալ ունէր ինքնեան ի Ս. Եկեղեցեաց յերաքանչիւր ամսոց Հազար Արուշ հասոյթ, այլ քանզի չէր բաւական ի ընուլ զծախս նորա, ուստի այժմ ի սոյն Վախֆ արարեալ զբամոցս կարգեցի նմա մշտնջենաւոր հասոյթ ամսոյ յամիս զվերոյիշեալ Հազար Արուշն, որպէսզի Գիրք, Թուղթ, Կերակուր և Հանդերձ, և այլ պիտոյք աշակերտելոց, որք անգանոր զօրն ողջոյն պարապին յուսումն գիտութեան ի պէտս հասարակութեան, հոգացին ըստ բաւականին:

Եւ հաստատեցի զայսոսիկ կանոնքս, նախ զի որպէս այժմ ես եմ Նազըր այս ամենայն Վախֆ արարեալ զբամոցս, նոյնպէս և յետ ժամանակի միշտ մինն յազգատոնմէ իմմէ լինիցի Նազըր յազգէ ազգ, մինչեւ ցմնալ միոյ տղայոց ազգատնմի իմոյ, սոյնպէս և Պատրիարքն ժամանակին յաջորդաբար լինիցի Նազըր մինչեւ յաւիտեան:

Երկրորդ, զի մինն ի մեծարու և ի բարերար իշխանաւորաց ժամանակին լինիցի Միւթէվէլլի Վախֆիս այ-



սորիկ, և այն, գիտութեամբ Պատրիարքին և Նազըրին և չորից Գլխաւորաց, որք Միւթէվէլլի են Ուսումնարանին և Դպրատանցն:

Եւ Վախըֆի Միւթէվէլլին յիւրաքանչիւր ամի ի Յուն-վարի մէկ եկեալ ի Պատրիարքարանն, զհաշիւն իւր տեսցէ առաջի Նազըրաց, և Միւթէվէլլիքն Ուսումնարանին և Դպրատանցն տացեն նմա զհաշիւն իւրեանց, և Իրատ և Մասրաֆ Ուսումնարանին և Դպրատանցն ուրոյն ուրոյն գրեսցին ի Քիւթիւկ Թէֆթէրն, և մի բնաւ խառնեսցին ընդ իրեարս, և զիցեն զթէֆթէրն ի սնտուկն, և Ուսումնարանն կամ Դպրատունքն եթէ ունիցին յաւելեալ զրամ, ի նոյն սնտուկն զիցեն, որպէս զի ի զէպ ժամանակի Վախըֆի չուրութով ախարէթ գնեսցի այնմ, որոյ իցէ զրամն, և կնքեսցեն զսնտուկն Միւթէվէլլին Վախըֆին և Նազըրքն: Եւ յիւրաքանչիւր տարւոյ ի լինել նորոգ հաշուի, Միւթէվէլլի Վախըֆին, և Միւթէվէլլիքն Ուսումնարանին և Դպրատանցն, կամ փոխեսցին կամ կրկին հաստատեսցին:

Ուստի և այժմ ըստ այսմ սահմանադրութեան կարգեցաւ Միւթէվէլլի Վախըֆիս այսորիկ սիրելի քեռորդին իմ Ազնուաբարոյ Կարապետ աղայն, և Միւթէվէլլի Ուսումնարանին Գիտութեան՝ Գերամեծար Ճանիկ Ամիրայն Մահսեսի Սիմէոնեան, և Միւթէվէլլի Դպրատանն աղքատ մանկանց՝ Արժանապատիւ Յովհաննէս աղայն Յակօբեան, և Միւթէվէլլի Դպրատանն Զայնաւորի՝ Յովհաննէս աղայն Ազնուուրեան, և Միւթէվէլլի Դպրատանն Խարթալու՝ Ազնուամեծար Միքայէլ աղայն Փիշմիշեան, իսկ կերպ կառավարութեան նոցին, աւանիկ նշանակեալ է ի կանոնական յատուկ կոնդակի իւրաքանչիւրոց:

Նաեւ Ազգային Ժողովով և ամենեցուն հաւանութեամբ և ուխտադրութեամբ հաստատեալ եղեւ, զի յետ ժամանակի Մայր Եկեղեցին որչափ և հարստացի, տակաւին ոչ բնաւ յետս դարձուցանելոց է զայն Վախըֆ արարեալ զրամքս, կամ զմասն ինչ նորա, այլ ըստ ժամանակին

յարմարութեան գնելոց է ախարէթս, և զեկամուտս ի նոցանէ ինքն առեալ զերեք հազար զրուշն յեկեղեցական արղեանց իւրոց տալոց է միշտ ի պէտս ծախուց Ուսումնարանին և Դպրատանցն:


Նոյնպէս և յետ ժամանակի ոչ ոք մարդ, եկեղեցական կամ աշխարհական, և ոչ ազգատոհմն իմ ունին երբեք իրաւունս կամ իշխանութիւն զայս գումար դրամոյ, կամ զմասն ինչ նորա խնդրել ի Մայր Եկեղեցւոյն որպիսի և իցէ պատճառաւ, զի ես Վախֆ արարեալ եմ մինչև ի յաւիտեան:

Ապա թէ ոք յայպազայ ժամանակս կամ իցի առնուլ զդրամս զայսոսիկ ի Մայր Եկեղեցւոյ, և յայլ պէտս գործածէ, կամ ի շինութիւն Եկեղեցւոյ կամ Վանուց, կամ Դպրատան տալ, կամ զիարդ և իցէ կերպիւ ջանասցէ աւերել զսահմանեալ Կտակագրութիւնս զայս, մինչև ցնշանախեց մի անգամ, այնպիսի մարդն անիծեալ լիցի յԱստուծոյ, և մասն և բաժին զՅուրդայի ժառանգեսցէ:

Իսկ որ ջանացող լինի և ջատագով, զի անփոփոխ մնասցէ այս իմ Կտակագրութիւն, և անկորուստ վախֆ արարեալ դրամս, զի մշտնջենաւոր շահիւքն նորին հաստատուն և պայծառ պահեսցի Ուսումնարանն և Դպրատունքն, այնպիսին օրհնեալ լիցի յԱստուծոյ և յամենայն Արբոց նորա, և ընկալցի ի Քրիստոսէ զվարձս բարիս աստ և ի հանդերձեալն:

Չայս Կտակագիր արարի և հաստատեցի ստորագրութեամբ և կնքով իմով ի Պատրիարքարանն որ ի Կոստանդնուպոլիս, յամի կենարարին մերոյ 1830 ի Փետրվարի 28, առաջի Ամենապատիւ և Վեհափառ Պատրիարքի Տեառն Կարապետի Արքազան Արքեպիսկոպոսի, և առաջի ազգախնամ Ամիրայից սիրելի եղբարց իմոց, և կամ իմ զի անփոխադրելի և հաստատուն մնասցէ ազգէ յազգ, մինչև յաւիտեան:

Ինագիրք այսմ Կտակագրութեան երկու են, որք և



հաստատեալ կնքեցան կնքով իմով, և կնքով Սրբազան Պատրիարքին, և ստորագրութեամբ և կնքով ոմանց Եկեղեցակառնաց, և Երեւելի և Ուխտապահ Աւիրայից, որոց մինն առ իս է, և միւսն եղաւ յարկեղ Պատրիարքարանին:

Իսկ օրինակք սորա ամփոփեալ կնքեցան Պատրիարքական կնքով և ընդ գրոյն Սահմանադրութեան եղան ի պահ յարկեղս՝ Ս. Աստուածածին Մայր Եկեղեցւոյն, Ս. Գէորգ Եկեղեցւոյն Սամաթիոյ, Ս. Հրեշտակապետ Եկեղեցւոյն Պալաթու, Ս. Ստեփաննոս Եկեղեցւոյն Խազիւղի, Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյն Ղալաթիոյ, Ս. Աստուածածին Եկեղեցւոյն Օրթագիւղի, Ս. Խաչ Եկեղեցւոյն Իւսկիւտարու, և Ս. Նշան Եկեղեցւոյն Խարթալու:

Այս կտակագրութիւն նկատամամբ պարագայից ժամանակիս ոչ հրատարակեցաւ յԱթոռանիստ Եկեղեցւոյ յԱզգային ժողովի անդ, այլ սահմանադրութիւն միայն ընթերցեալ եղեւ, որ լոկ արտաքին ցոյցք է կտակագրութեանս այսմիկ, զի ոչ այլ ինչ է սահմանադրութիւն, և ոչ այլ ինչ է կտակագրութիւնս, այլ միեւնոյն, բայց իսկն իրողութեան կտակագրութիւնս է, զոր արարի և հաստատեցի ի յաւիտենական Յիշատակ անձին իմոյ, և նախնեաց իմոց, և ամենայն ազգատոհմիս, որ ծածկեցաւ ի բազմաց վասն քաղաքական կարծեաց, և ծանուցաւ հաւատարիմ եղբարց իմոց և Սիրելեաց:

Ի հաստատութիւն կտակիս, զոր
կամաւ եւ յօժարութեամբ արարի, ստորագրեալ
կնքեցի
ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՋՃԵԱՆ
ԿՅԻԲ

Պատրիարք կոստանդնուպոլսոյ ԿԱՐԱՊԵՏ ԱՐՔԵՊԻՍ-
ԿՈՊՈՍ, Չաքարիա Պատրիարքի աշակերտ Պոլսեցի ԱՍՏ-
ՈՒԱԾԱՏՈՒՐ ԵՊԻՍԿ., ՊԵՏՐՈՍ ԵՊԻՍԿ. Պրուսացի, Ս.

Երուսաղէմի Վէճիլ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱԲ., ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎՐԴ.
 Տ. ԹԱԴԷՈՍԵԱՆ, Սրբազան Տէրութեան ծառայ ԱՆԴՐԷԱՍ
 ՎՐԴ. Գրագիր Պատրիարքարանի, Սամաթիոյ Քարոզիչ
 ՊԵՏՐՈՍ ՎՐԴ. ԱԼԹՈՒՆԵԱՆ, Միջագիւղի Քարոզիչ ՄԱՏ-
 ԹԷՈՍ ՎՐԴ., Քարոզիչ ԹԱԴԷՈՍ ՎՐԴ. որ ի յիւսկիւտար,
 Վէճիլ Տ. ԱՌԱՔԵԼ, Սամաթիոյ Աւագ Տ. ՅՈՎԱԷՓ, Ս.
 Խաչ Եկեղեցւոյ Տ. ԲՍՐԹՈՒՂԻՄԷՈՍ, Ս. Հրեշտակապետ
 Եկեղեցւոյ Տ. ՄԵԼՔՈՆ, Մայր Եկեղեցւոյ Տ. ԳԷՈՐԳ,
 յՕրթագիւղ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Տ. ԳԱԼՈՒՍ,
 Ս. Աստուածածին Մայր Եկեղեցւոյ Մահտեսի Տ. ԱՐԻՍ-
 ՏԱԿԷՍ, Մայր Եկեղեցւոյ ԱԻԱԳԵԱՆ Տ. ՍԱՐԳԻՍ, Ծառայ
 Էնիշթէ ԳԷՈՐԳ ՄԵՐԿԵՐԻՈՍԵԱՆ, Ծառայ Եէկէն ԿԱՐԱՊԵՏ
 ՊԵՉՃԵԱՆ, Ծառայ Տեառն Քեանեայ ԿԱՐԱՊԵՏ ԱԶՆԱՌԻՐ-
 ԵԱՆ, Ծառայ Տեառն Ճարտարապետ ԳՐԻԳՈՐ, Ծառայ
 Տեառն Վանօղապետ ՍԻՄՕՆ, Ծառայ Տեառն Մահտեսի
 ՅԱԿՈԲ ԼԱԹԻՑԵԱՆ, Ծառայ Տեառն Մահտեսի ՊՕՂՈՍ
 ԿԷԼԿԷԼԵԱՆ, Ծառայ Տեառն ՄԻՔԱՅԷԼ ՓԻՇՄԻՇԵԱՆ, Ծա-
 ռայ Տեառն ՃԱՆԻԿ ՄԱՀՏԵՍԻ ՍԻՄԷՈՆԵԱՆ, Ծառայ Տեառն
 ՅԱՐՈՒԹԻՒՆ, ՄԱՀՏԵՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ, Ծառայ Տեառն
 ԲԱՐՈՒՆԱԿ ՄԱՏԷՆԵԱՆ, Ծառայ Տեառն ՊՕՂՈՍ ՄԱՐԳԱՐ-
 ԵԱՆ, Ծառայ Տեառն ՄԱԳՍՈՒՏ ՍՍՐԻՄԵԱՆ, Ծառայ Տեառն
 ՄԱՀՏԵՍԻ ԵՐԱՄ, Ծառայ Եէկէն ՆՇԱՆ ՊԵՉՃԵԱՆ, Ծառայ
 Եէկէն ՊՕՂՈՍ ՊԵՉՃԵԱՆ, Ծառայ Եէկէն ՍԱՐԳԻՍ ՊԵՉ-
 ՃԵԱՆ, Ծառայ Սան ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԻԼԷՉԻԿՃԵԱՆ, Ծառայ
 Տեառն ՊԱՂՏԱՍԱՐ ԳԱՍՊԱՐԵԱՆ, Ծառայ Տեառն ԽԱԶՍ-
 ՏՈՒՐ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ, Ծառայ Տեառն ՄԱՀՏԵՍԻ ՄԱՐՏԻ-
 ՐՈՍ, Ծառայ Տեառն ՄԱՐԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ, Ծառայ
 Տեառն ՅՈՎՀԱՆՆԷՍ ԽՕՐԱՅԱՆՃԵԱՆ, Ծառայ Տեառն ՅՈՎ-
 ՀԱՆՆԷՍ ՅԱԿՈԲԵԱՆ:

Ես նուազ Ծառայ Յիսուսի Քրիստոսի Յարութիւն
 Պեզճեան բաց ի վերագոյնդ նշանակեալ մեծ գումար զբա-
 մոց զոր յաճի 1830 Փետրուարի 28 ի Պատրիարքութեան


Տեառն Կարապետի Սրբազան Արքեպիսկոպոսի ետու Աթո-
սանիստ Եկեղեցւոյն ի թեթեւութիւն պարտուց նորա, և
Վախֆ արարի զայնոսիկ զրամս Ուսումնարանին Գիտու-
թեան և Ուսումնարանին Չայնաւորի, և Դպրատանն սղ
քատ Մանկանց և Դպրատանն Խարթալու:

Այժմ որ է Ա.Տ Տեառն 1833 Յուլիսի 1 ի Պատրիարքու-
թեան մայրաքաղաքին Կոստանդնուպոլսոյ Տեառն Ստե-
փաննոսի Սրբազան Արքեպիսկոպոսի ի յատուկ գոյից իմոց
ազատ կամօք և յօժարութեամբ ետու վերստին Աթոսա-
նիստ Եկեղեցւոյն հինգ հարիւր քսակ ձեռամբ նորին Սըր-
բոյ Եկեղեցւոյն Միւթէվէլլի Մեծապատիւ Մահտեսի Մար-
տիրոս Ամիրային՝ Քէսէն երկու դրուշ շահովն ի վճարումն
մնացեալ պարտուց Եկեղեցւոյն զոր ծանր տոկոսեօք առ-
եալ տառապէր: Եւ զայնոսիկ զրամսն ևս Վախֆ արարի
երկուց Դպրատանց Սրբոյն Պօղոսի Առաքելոյ և Սրբուհոյ
Վառվառեայ Կուսին, զորս իմով ծախիւք նորոգ կառուցի
յարտաքին Թաղն Խուլիսաբուրի ի յիշատակ յաւիտենական
Լուսահոգի Մնողաց իմոց բազմերանտ Հօրն իմոյ Պօղոս
Աղային և բարեգութ մօրն իմոյ Վառվառեայ Տիկնոջ, որ-
պէս զի շահիւք սոյն մայր զրամոց որ առնէ յամիսն 1000
դրուշ հոգասցին ծախք երկուց Դպրատանցս այսոցիկ զի
մնացեն նոքա հաստատուն մինչեւ ի յաւիտեան: Եւ ահա
ազատ կամօք և յօժարամբ հաւանութեամբ ըստ ի վերա-
գոյնդ որոշ որոշ նշանակեալ պայմանաց սահմանեալ հաստա-
տեցի և կամիմ զի կացցէ Կտակս յամենայն ապագայ ժամա-
նակս անփոփոխ և անայլայլելի:

Ի հաստատութիւն Կսակիս, զոր
կամաւ եւ յօժարութեամբ արարի ստորագրեալ
կնեցի
ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՋՃԵԱՆ
ԿՅԻԲ

Պատրիարք Կոստանդնուպոլսոյ ՍՏԵՓԱՆԸՆՈՍ ԱՐՔԵ-
ՊԻՍԿՈՊՈՍ, նախկին Պատրիարք Կ. Պոլսոյ ԿԱՐԱՊԵՏ Ե-
ՊԻՍԿՈՊՈՍ, Զաքարիա Պատրիարքի աշակերտ Պոլսեցի
ԱՍՏՈՒՄՍՏՈՒՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ, Սրբազանի Փոխանորդ ՊՕ-
ՂՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ, Ս. Երուսաղէմի Փոխանորդ ՅՈՎՀԱՆՆԷՍ
ՎՐԴ., ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎՐԴ. Տ. ԹԱԴԵՈՍԵԱՆ, ՄԱՏԹԷՈՍ
ՎՐԴ. ԶՈՒԽԱՃԵԱՆ, ՊԵՏՐՈՍ ՎՐԴ. ԱԼԹՈՒՆԵԱՆ, Մայր
Եկեղեցւոյ Տ. ԱՌԱՔԵԼ. Միջազգիւղի Աթոռակայ Տ. ԳԱ-
ԼՈՒՍ, Ծառայ Էնիթէ ԳէՈՐԳ ՄԵՐԿԵՐԻՈՍԵԱՆ, Ծառայ
Եէկէն ԿԱՐԱՊԵՏ ՊԵՉՃԵԱՆ, Ծառայ Եէկէն ՆՇԱՆ ՊԵՉ-
ՃԵԱՆ, Ծառայ Եէկէն ՊՕՂՈՍ ՊԵՉՃԵԱՆ, Ծառայ Եէկէն
ՍԱՐԳԻՍ ՊԵՉՃԵԱՆ, Ծառայ Սան ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԻԼԷՉԻԿ-
ՃԵԱՆ, Ծառայ Տեառն Քեահայ ԿԱՐԱՊԵՏ ԱԶՆԱՒՈՒՐԵԱՆ,
Ծառայ Տեառն Մահապի ՊՕՂՈՍ ԿԷԼԿԷԼԵԱՆ, Ծառայ
Տեառն Ճարտարապետ ԿԱՐԱՊԵՏ ԳՐԻԳՈՐԵԱՆ, Ծառայ
Տեառն Վանօղապետ ՊՕՂՈՍ ՍԻՄՈՆԵԱՆ, Ծառայ Տեառն
ՄԻՔԱՅԷԼ ՓԻՇՄԻՇԵԱՆ, Ծառայ Տեառն ՄԱՀՏԵՍԻ ՅՈՎ-
ՀԱՆՆԷՍ ԱՆՏՈՆԵԱՆ, Ծառայ Տեառն ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԱՀ-
ՏԵՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ, Ծառայ Տեառն ԲԱՐՈՒՆԱԿ ՄԱ-
ՏԷՆԵԱՆ, Ծառայ Տեառն ՊՕՂՈՍ ՄՍՐԳԱՐԵԱՆ, Ծառայ
Տեառն ՄԻՍԱՔ ՄԻՍԱՔԵԱՆ, Ծառայ Տեառն ՄՀՏ. ԵՐՍՄ,
Ծառայ Տեառն ԳՐԻԳՈՐ ՓԻՇՄԻՇԵԱՆ, Ծառայ Տեառն ՍԱՐ-
ԳԻՍ ՓԻՇՄԻՇԵԱՆ, Ծառայ Տեառն ՄՀՏ. ՄԱՐՏԻՐՈՍ ՊԱՂ-
ՏԱՍԱՐԵԱՆ, Ծառայ Տեառն ՄԱՐԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ,
Ծառայ Տեառն ՄՀՏ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՓԻՇՄԻՇԵԱՆ, Ծառայ
Տեառն ՅՈՎՀԱՆՆԷՍ ՅԱԿՈՐԵԱՆ, Ծառայ Տեառն ՅԱՐՈՒ-
ԹԻՒՆ ԽԱԶՍՏՈՒՐԵԱՆ:

Այս Կտակագրութիւնը, որ ցարդ անազարտ կերպով
պահուած է Պատրիարքարանի մէջ, գրուած է գեղեցիկ
գրով մը երկար թուղթի մը վրայ և ետեւը պահպանուած
մետաքս լաթով մը: Վրան գրուած է է տառը ճառագայթ-
ներու մէջ առնուած և անոր ներքեւ կարապետ Պատ-



Պատրիարքական Արքուք

քիարքի մեծագիր կնիքը: Սկզբնաւորութեան առաջին երկու պարբերութեանց սկզբնատառերը զարդանկար են և ոսկեգրուագ և հակառակ դարու մը հնութեան, մնացած է անայլայլ: Կտակագրին քովքտի երկարութեանը վերէն վար կ'երևին ստորագրութիւններն ու կնիքները եկեղեցականաց և աշխարհականաց և այդ կը շարունակուին կտակագրին ներքեւն ալ գրաւելով լայն տեղ մը:

Այս կտակագրին մէջ յիշուած Ուսումնարաններուն, աղքատ մանկանց դպրոցին, ինչպէս նաև Խարթալի և Գում գարուի Գուրաի վարժարաններու մշտնջենաւոր հասոյթներ սահմանած ըլլալով, անոնք ալ առանձինն սահմանագրութիւն խորագիրներու ներքեւ նշանակուած ու պայմանները ձեռնարկուած են: Պատրիարքարանի մէջ պահուած կայ նաև ուրիշ կոնդակածե գրութիւն մը, որուն մէջ յիշուած է թէ շինութեանց ասթիւ գոյացած պարտքերը գոցելու համար Կարալիտ Պատրիարքին նախագահութեան տակ մեծ ժողով մը կը գումարուի, ուր ներկայ կ'ըլլայ Պեղճեան ու 236 անձինք, որոնք կը ստորագրեն ու կը կնքեն Ազգ. Ժողովի ձեւով կազմուած այդ հաւաքոյթին մէջ տրուած որոշումները:

Այս գրութիւնը հոս կ'ամփոփենք նետեւալ կերպով.

Մայր Եզեղեցին 1826ին կ'այրի, ոչ միայն թափուր մը մնայ ի գոյից, այլև 285000 զշ. պարտք մը կը մնայ, որ գոյացած է 1819ի նորոգութենէն: 1828 Փետր. 1ին ջանացողութեամբ Քրիստոսազօր Ամիրային և արգոյ երեւի իշխանաց հրաման առնուեցաւ արքունի դասնէ ու նոյն ամսոյ 10ին շինութեան սկսուեցաւ. բայց հազիւ կէսին հասած, շինութիւնը դադարեցաւ և գործը այն աստիճանին հասաւ որ շինութիւնը պիտի խափանուէր. ուստի քէսէն 5 զշ. շահով տասը բեռ 50000 զշ. փոխառութեամբ կ'աւարտի երեք տաճարներու շինութիւնը, որ կը խորհրդաւորուէ Ամենասուրբ Երրորդութիւնը: Գոյացած պարտքը գոցելու համար Ազգին, գլխաւորները որոշեցին


Քրիստոսի մեծագիր կնիքը: Սկզբնաւորութեան առաջին երկու պարբերութեանց սկզբնատառերը զարդանկար են և ոսկեգրուազ և հակառակ դարու մը հնութեան, մնացած է անայլայլ: Կտակագրին քովտի երկարութեանը վերէն վար կ'երևին ստորագրութիւններն ու կնիքները եկեղեցականաց և աշխարհականաց և այդ կը շարունակուին կտակագրին ներքեւն ալ գրաւելով լայն տեղ մը:

Այս կտակագրին մէջ յիշուած Ուսումնարաններուն, աղքատ մանկանց դպրոցին, ինչպէս նաև Խորթալի և Գում գարուի Դուբսի վարժարաններու մշտնջենաւոր հասոյթներ սահմանած ըլլալով, անոնք ալ առանձինն սահմանագրութիւն խորագիրներու ներքեւ նշանակուած ու պայմանները ճշգրտուած են: Պատրիարքարանի մէջ պահուած կայ նաեւ ուրիշ կոնդակածեւ գրութիւն մը, որուն մէջ յիշուած է թէ շինութեանց ասթիւ գոյացած պարտքերը գոցելու համար Կարապետ Պատրիարքին նախագահութեան տակ մեծ ժողով մը կը գումարուի, ուր ներկայ կ'ըլլայ Պեղճեանն ու 236 անձինք, որոնք կը ստորագրեն ու կը կնքեն Ազգ. ժողովի ձեւով կազմուած այդ հաւաքոյթին մէջ տրուած որոշումները:

Այս գրութիւնը հոս կ'ամփոփենք նետեւալ կերպով. Մայր Եկեղեցին 1826ին կ'այրի, ոչ միայն թափուր կը մնայ ի գոյից, այլև 285000 ղշ.ի պարտք մը կը մնայ, որ գոյացած է 1819ի նորոգութենէն: 1828 Փետր. 1ին ջանացողութեամբ Քրիստոսագոր Ամիրային և արքայ երեւելի իշխանաց հրաման առնուեցաւ արքունի դռանէ ու նոյն ամսոյ 10ին շինութեան սկսուեցաւ. բայց հազիւ կէսին հասած, շինութիւնը զաղչեցաւ և գործը այն աստիճանին հասաւ որ շինութիւնը պիտի խափանուէր. ուստի քէսէն 5 ղշ. շահով տասը բեռ 50000 ղշ. փոխառութեամբ կ'աւարտի երեք տաճարներու շինութիւնը, որ կը խորհրդանշէ Սմինասուրբ Երրորդութիւնը: Գոյացած պարտքը գոցելու համար Ազգին, գլխաւորները որոշեցին

Իմտատիչէ (նպաստ) հաւաքել, որմէ գոյացաւ 220000 զշ. ժողովրդային ողորմութեան արդիւնքը կ'ըլլայ 130000 զշ. և սակայն տակաւին 700000 զշ. պարտք մը կը մնայ, որուն վրայ բարգուելով նախորդ նորոգութենէն մնացած 285000 զշ. պարտքը, կը յանդի 920000 զշ. ի: Այս պարտքին համար պահանջատէրերը կը նեղեն: Բացի այս պարտքէն նախորդ նորոգութեանց համար ալ Պոլսոյ եկեղեցիներէն փոխ առնուած 272500 զշ. ի պարտքն ալ կար, զոր հարկ էր վճարել, քանի որ այս պարտքերը կը պատկանէին Ազգին: Ուստի ազգին գլխաւորները Պատրիարքարանի մէջ հաւաքուելով կը խորհրդակցին այս պարտուց վճարման մասին: Այս ժողովին մէջ Պէղծնան, որ լուսու մտախօս նստած էր և որ անշուշտ պատրաստուած էր նոր և անակնկալ բարեգործութիւն մը եւս ընելու, յանկարծ հետեւեալ առաջարկութիւնը կ'ընէ ներկաներուն խորին լուսութեան մէջ.

—Միտքս բան մը եկաւ և ասիկա կրնայ օգտակար ըլլալ: Գիտէք որ Սարթալու Դպրոցին ժամանակէ մը ի վեր հոգեսէրներու կողմէ վախճի եղած գումարը կայ, որ շահուարուելով հիմայ հասած է 100000 զշ. ի: գիտէք նաեւ, որ հասարակութիւնը Մայր եկեղեցոյ դպրաց տուած էր մայր գումար մը, որուն մէջ ամենքս ալ մեր բաժինը ունինք, շահով աւելցուցինք և այս գումարն ալ այսօր կը հասնի 100000 զշ. ի և այդ գումարները կրնանք այսօր վախճի շուրուծով դարձնել Մայր եկեղեցոյ քէսէն 100 փարա շահով: Գիտէք նոյնպէս որ ես վաղուց փափաք ունէի ազգիս մէջ հոգեւորականներ հասցնելու նպատակաւ Ուսումնարան մը հիմնելու համար և մայր գումար մը վախճի բրած էի: այս գումարը, որուն մէջ կայ նաեւ ուրիշներուն ալ նուէրը, շահու տուինք, և որովհետեւ տակաւին այս Ուսումնարանը հիմնուած չէ, 200000 զշ. ի հասած այս գումարն ալ կրնամ վախճի շուրուծով Մայր եկեղեցոյ փոխանցել քէսէն 100 փարա շահով: Գիտէք նաև որ ազգատ մանկանց դպրատունը որ առօրեայ ողորմութեամբ



Մայր եկեղեցոյ ներքին տեսարանը

կը կառավարուի և օր մը կրնայ խափանուիլ, որովհետև ամսական 1000 ղշ. ծախքի մը կը կարօտի, պէտք է այս երկու հարիւր հազար ղշ.ը տանք ու դպրոցին վախճի ընենք և այս մայր գումարը դարձնենք Մայր Եկեղեցւոյ վրայ, որպէսզի ամսական հազար ղշ.ը ապահովուի: Բայց պէտք է որ այս բաները Ազգային Ժողովով տնօրինենք ու կարեւոր որոշումներով ու պայմաններով ու կտակագրութեամբ հաստատենք անեղծանելի կերպով, որպէս զի այս բոլոր վախճները անկորուստ մնան:

Այս առաջարկութիւնը միաձայն հաւանութեամբ կ'ընդունուի և շնորհակալութիւն ու գտնութիւն կը մատուցուի այս նոր բարեգործութեան համար: Պեզճեանի այս պայմանները լրացնելու համար կ'որոշուի Ազգ. Ժողով գումարել և Փետր. 28ի օրը աթոռանիստ Մայր Եկեղեցւոյ մէջ դարձեալ կարապետ Պատրիարքին նախագահութեան տակ կը հաւաքուին քարոզիչ վարդապետներ, աւագ և աթոռակալ քահանաներ, եկեղեցեաց միւթէվէյլիներ, ամիրաներ և զլիաւոր արհեստաւորներ: Այս ժողովին մէջ Պատրիարքը բանախօսութեամբ մը կը բացատրէ գումարման նպատակը և Ամիրային առաջարկութիւնը և բոլորն ալ միահամուռ սիրով և հաւանութեամբ կ'ընդունին առաջարկը և կ'որոշեն նշանախոց մը անգամ չի փոխել: Յետոյ Պատրիարքը կ'աւելցնէ. «Մինչև հիմա նմանը երբեք չի տեսնուած այսպիսի բարերարութեան մը իբրև երախտագիտութիւն, պէտք է որ եպիսկոպոս մը պատարագէ «այր Եկեղեցւոյ մէջ վասն արեւչատութեան մեծ ամիրային ու վասն հոգւոց ննջեցելոց անոր սիրելիներուն»: Այս առաջարկն ալ կ'ընդունուի ու եպիսկոպոսական պատարագը կը մատուցուի մեծ հանգիստութեամբ, ի ներկայութեան բազմամբոյն ժողովրդեան: Պատարագի աւարտումէն ետքը ժամարար եպիսկոպոսը Պահպանիչ կ'ըսէ Պեզճեանի զլխուն վրայ:

Ահա այսպէս Պեզճեան, որ Ազգ. Պատրիարքարանի

ալ շինութեան մեծապէս սատարած է, նոր բարեդործութեամբ մը կ'օժտէ ազգ. վարժարանները: Միւս կողմէ Պեղճեան Հայ երաժշտութիւնը ծաղկեցնելու համար ալ ջանք չի խնայեր, ու իր հրամանաւ Ֆէնէրի համբաւաւոր երաժիշտ Թաթաւլյացի Ոնոփրիոս Յոյն Փսալթին Դպրաց Ուսումնարանին մէջ կը դասախօսէ յունական ձայնագրութիւնը Հայ տղոց և կ'ուսուցանէ մեղեդիներ ու քրաթեմաներ, որմէ դաս կ'առնէ նաեւ Համբարձում Լիմոնճեան Հայ կաթողիկը, որ հնարիչը պիտի ըլլար ի վերջոյ հայ ձայնագրութեան ու զայն պիտի ծաղկեցնէր մեր ազգին մէջ(1):

Պեղճեան եկեղեցական երգեցողութիւնը քաջալերելու նպատակաւ թանկագին չապիկ մը շինել տալով կը հագնէր ու ժամերգութեանց պահուէն դպրաց գլուխը կը կենար: Այդ չապիկը պահուած է ցարդ և տարին մէկ երկու անգամ կը հագնի օրուան դպրապետը:

Պեղճեան կը փոփաքի թաղուիլ Մայր Եկեղեցւոյ մէջ ու առ այս կայս. հրովարտակ պէտք էր: Օր մը Սուլթան Մահմուտ կը կանչէ Պեղճեանը, երբ ան կ'աղօթէր Մայր Եկեղեցւոյ մէջ, Պեղճեան քիչ մը կ'ուշանայ ու երբ Սուլթանը կը հարցնէ ուշանալուն պատճառը, Պեղճեան անվրդով կը պատասխանէ.

— Տէր արքայ, այն եկեղեցին էի, որուն շինութեան հրամանը ստացանք Ձեր Վեհափառութենէն, հոն կ'աղօթէի Ձեր անդին կենաց համար:


— Եկեղեցին մնաս, հոն մեռնիս, կ'ըսէ Սուլթանը:

Պեղճեան խկոյն խոնարհելով.


— Տուր, Տէր իմ, հոն մնալու հրովարտակը, ինչպէս որ հրամայեցիր:

Կը խնդայ Սուլթանը այս պատրաստաբանութեան վրայ, ու կը շնորհէ հրովարտակը: Պեղճեան ի կենդանու-

(1) Պատմ. Հայ Ձայնագրութեան. Արխատակէս քհ. Հիսարւան, 1914 էջ 10:



Մայր Եկեղեցւոյ Այսպան և Ս. Թորոսի Մասուրը



Մայր Եկեղեցւոյ Աւանդատունը և Մյուսուրի Մեղանը Ս. Գր. Լուսաւորչի Մեղանը

Թեան շինել կուտայ իր գերեզմանը Մայր Եկեղեցւոյ Ս. Յարութեան Մատուռին մէջ, ուր յաճախ կ'այցելեր ու կուլար: Պեզճեանի մահը կը պատահի 1834 Յւնվար Յին և ազգը, իբրեւ երախտագէտ իր անզուգական բարերարին, փառաշուք յուղարկաւորութիւն մը կը կատարէ ու Պեզճեանի մարմինը կը թաղուի իր շինել տուած գերեզմանին մէջ, որ կայ մինչև ցայսօր և որուն վրայ կը գտնուի դամբարան մը հետեւեալ արձանագրութեամբ.

Ահա մեծագործ, Այր անզուգական
Պարոն Պողոսի որդի պատուական
Իշխան վեհապանձ Յարութիւն Պեզճեան
Ազգօգուտ գործովք անմահ ի մահուան
Գիտաց զաստի կեանս ստուեր անցական
Մեծութիւն եւ փառք երազ ցնդական
Իբրեւ ցանկացող կենացն անվախճան
Մթերեաց իւր գանձ յերկնային խորան
Չեռն իւր առատ լեզու էր խոստման
Օգուտըն ազգի շահ օգտի ինքեան
Որ խոկմամբ մահու որպէս խոհական
Շինեաց զայս շիրիմ ի կենդանութեան
Ուր ամփոփեցաւ արդեամբք բազմազան
Ի վաթսուն երեք ամին իւր լրման
Սա տենչմամբ վերին յարկիդ բնակութեան
Բնակեաց ի գաւիթ տանս սրբութեան
Բարերար Յիսուս հանգո յաւիտեան
Զհոգի ծառայիդ յերկնից քո խորան

1834 Յունվար 3

Մայր Եկեղեցին կրած է ժամանակ ժամանակ պզտիկ նորոգութիւններ. միջին տաճարի գաւիթին որմնափակն

ալ վանդակապատի փոխուած է: 1870ին Խրիմեան Մկրտիչ Պատրիարքի ջանքով Աւագ Տաճարին դրան առջեւ կը շինուի կաթողիկէ աշտարակ զանգակատունը մեծ ժամացոյցով մը, որուն զարկը կը յուէր մինչեւ հեռուներէն. այսօր այդ ժամացոյցը կը կարօտի նորոգութեան. որովհետեւ տարիներէ ի վեր չի գործեր. բարեգործ անձ մը պէտք է որ կատարէ այս նորոգութիւնը: Իսկ 1902ին ալ Օրմանեան Պատրիարքի օրով կատարեալ նորոգութիւն մը կ'ունենայ եկեղեցին՝ վաճառական Վանեցի Սմբատեան Մանուկ էֆ.ի ծախքով: Այս վերջինը կը թաղուի Մայր եկեղեցւոյ բակը:

Ահա Մայր եկեղեցւոյն արձանագրութիւնները.

«Ողորմութեամբն Աստուծոյ կառուցան Ս. Տաճարքս արդեամբ ազգիս Հայոց ի Պատրիարքութեան Տեառն Կարապետի Արքեպիսկոպոսի: Յամի Տեառն 1828 Հոկտեմբեր 1: Տէր վարձատրեսցէ աստ և ի Յարութիւն կենաց զյատուկ պատճառ շինութեան սոցին հանդերձ կենդանեօք և ննջեցելովք, և զամենայն Հոգաբարձու յարգելիան, ևս և զհամայն նուիրամատոյց և ձրի աշխատաւոր բարեպաշտ ժողովուրդս:»

Միւս արձանագրութիւնը.



«Պատրիարքակոն Աթոռանիստ Մայր եկեղեցիս Ա. Աստուածածնի կրկին կառուցեալ արդեամբ ազգին գլխաւորութեամբ Յարութիւն Ամիրայի Պեղճեան, ի Պատրիարքութեան Տ. Տ. Կարապետի Արքեպիսկոպոսի Յամին 1828: Վերստին նորոգեցաւ և գեղազարդարեցաւ ներքուստ և արտաքուստ արդեամբ Մանուկ էֆ. Սմբատեանի առն վաճառականի ի Պատրիարքութեան Տ. Տ. Մաղաքիա Արքեպիսկոպոսի: Յամին 1902:»

Մայր Տաճարի Խորանի կամարին վրայ գրուած է.

«Ձոր ինչ խնդրիցէք ի Հօրէ իմմէ յանուն իմ, տացէ ձեզ:»
Պեղճեան 1832ին սատարած է նաև Երուսաղէմատան շինութեան, ինչպէս կը հաւաստէ արձանագրութիւն մը, որ երբեմն Երուսաղէմատան ընդունելութեան սրահը կը զարդարէր:



ՄԿՐՏԻՉ ՊԱՏՐԻԱՐՔ



Մալր եկեղեցւոյ արձախանի դրան սեաւաւանը

Ո՞վ էր Յարութիւն Պեղճեան


ԺԸ դարուն վերջերը ծնած և ժԹ դարուն սկիզբները անուանի նշած այս Հայը, այս հոյակապ անձնաւորութիւնը արդի սերունդը անունով միայն կը ճանչնայ: Այս մեծ հայուն կեանքն ու գործերը հատորներ կը լեցնին, բայց դժբախտաբար հազիւ ունինք անոր կենսագրութեան մասին գրքոյկ մը՝ գրուած Ստեփան Փափազեանէ և աստ անգ ցրիւ տեսութիւններ: Կ'արժէ որ Պեղճեանի կեանքն ու գործերը համառօտիւ յիշատակենք հոս:

Պեղճեան Յարութիւն որ խազէզ (Գազազ) անունով ճանչցուած է, որդին է Կարսեցի Պօղոսի և կնոջը վառվառեայ, և ծնած է Եէնիգարուի մէջ 1771 Ապրիլ 16ին: Փոքրիկն Յարութիւն իր նախնական ուսումը կը ստանայ այն ատեն նոր բացուած Մայր վարժարանը: 12 տարեկանին Շուկայ մետաքսավաճառի մը քով աշկերտ կը մտնէ ու իր ճարտար և խոհական ընթացքով այդ դործին մէջ բաւական յաջողակութիւն ցոյց կուտայ, այնպէս որ երբ Տիւզեան Յովհաննէս Չէլէպի Տէրութենէն կը ստանայ մետաքսի վարձակալութիւնը, կը տեսնէ և կը գնահատէ Յարութիւնի ճարտարութիւնը, ու իր դործին վերակացու կը կարգէ: Տիւզեան չէր սխալած իր ընտրութեան մէջ. Պեղճեանի հաւատարիմ ծառայութիւնը այնքան գոհ կը ձգէ զինքը, որ մինչեւ իր տան բոլոր հոգերն ալ անոր կը յանձնէ և կ'ընդունի զայն իբրև իր հարազատ զաւակը:

Պեղճեան հետզհետէ համակրութիւն և վստահութիւն կը վայելէ ամէն կողմէ և պետական ու ազգային շրջանակներու մէջ լայն ազդեցութիւն մը կ'ունենայ, աչն

աստիճանն որ, մեր ժամանակակից պատ Իռլանդիան մէջ իրեն հաւասարող չէ գտնուած: «Պետական պաշտօնեայ, ճարտար ելեւմտագէտ, ներքին խորհրդական, անձնական բարեկամ և մտերիմ ընկերակից Սուլթան Մահմուտի, վերանորոգիչ ու բարեկարգիչ վեհապետին մօտ, որուն ընդունելին էին իր բոլոր առաջարկները և փոխադարձաբար ինքն ալ անոր բոլոր բաղձանքներուն գործադիրն էր այնպիսի իմն հանճարեղ դարձուածքներով որ ուղղութեան և արդարութեան նպատակը ոտնակոխ եղած չըլլար: Նուկայի կեանքէն զատ ուրիշ ասպարէզ չտեսած, բայց բնատուր ուշիմութեան սքանչելիք մը եղած, վարելու և վարուելու, խօսելու և համոզելու, գտնելու և ճարելու, գործելու և գործակցելու արտասովոր կարողութիւններով, որով զրեթէ Օսմ. Պետութեան վարիչը և Հայ ազգութեան պետը և անհատական յաջողութեանց տիպարը դարձաւ ի կենդանութեան և անջնջելի հռչակ թողուց ետեւէն» (1):

Պեղծեանի կեանքը կարելի է բաժնել երեք մասի. որպէս պետական, որպէս բարեպաշտ և որպէս բարեյար, յատկութիւններ ու հանգամանքներ զորս կատարելագէս ի յայտ բերաւ իր բովանդակ կեանքին մէջ: Պեղծեան որպէս պետական՝ մարդ շահելու ճարտարութիւնը ունեցաւ առանց ստորնանալու, նոյն իսկ յաջողեցաւ իր թշնամիները իրեն բարեկամ դարձնել: Նշանաւոր է Փողերանոցի իր պաշտօնավարութիւնը նախ իրրեւ փոխանորդ, ապա իբր վերատեսուչ: Պեղծեանի մտածման արդիւնքն էր արծաթի ու պղնձի խառնուրդ մեքալիֆի հաստատութիւնը, որ գործածական էր մինչեւ մօտիկ անցեալը, նոյն իսկ իր անձը վտանգելով տեսած ընդդիմազրութիւններէն: Պեղծեան այնքան մեծ ծառայութիւններ մատոյց պետութեան, որ մինչեւ անգամ այն ատեն



Գաղազ Յարութիւն Ամիրային Դպրութեան Շապիկը

(1) Ազգապատում Գ. հատոր, էջ 3645 46:

ամէնէն բարձր պատուանշանին՝ Թաովիրը Հիւժայունին արժանացաւ: Աւելորդ կ'ըլլայ հոս երկարօրէն խօսիլ այդ ծանօթութեանց մասին. սաչափ միայն ըսենք որ Պեղճեան այնքան համակրելի էր Սուլթանին, որ ինքնին՝ առանց անոր բան մը որոշելու եւ հրամայելու չէր կրնար:

Պեղճեան որպէս բարեպաշտ, «Միամիտ Քրիստոնէի մը չափ հոգեւորական պարտքերու ճշգրտան, եկեղեցական կանոններու նախանձայոյց եւ բարեպաշտական ջերմնաւորութեանց հետեւող էր» (1): Պեղճեան, որքան բարի ու հեզ, այնքան ալ խիստ էր ամբարտաւանութեանց հանդէպ: Արդեւք դրուած էր որ Եկեղեցւոյ դասին մէջ բացի շապիկ հագած դպիրներէն, ժողովուրդէն ոչ ոք գտնուի: Եւ Պեղճեան յարգած էր այդ սովորութիւնը: Օր մը Սարիմեան Մաքսուտ Ամիրայ անգոսնելով դրուած արգելքը եւ արհամարհելով Յւազերէցին զիտողութիւնը, կը մտնէ Դասը. այս պարագան Պեղճեանի զայրոյթ կը պատճառէ ու կ'ուզէ անոր ամբարտաւանութիւնը կտրելու ու դաս մը տալ: Մագսուտ Ամիրայի եւ իր մէկ երկու պարագաներուն պաշտօնի մէջ զեզձումնին երեւան կ'ելլեն եւ Պեղճեան ալ կը հաստատէ. դատաստանի կ'ենթարկուին ու մահուան վճիռ կ'ելլէ: Պեղճեանի սպասածն այս չէր սակայն, ուստի աղօթքով ու Ս. Խորհուրդի մասնակցութեամբ կը դիմէ կայսեր, ոտքը կ'իջնայ եւ վճիռը բեկանել տալով կը փրկէ (2):

Պեղճեան որպէս բարերար կը գերազանցէ ինքզինքն ալ: Ինք ամուրի էր եւ անժառանգ. քոյրերը ամուսնացուցած ու առաւելապէս օժտած էր նիւթակաւով: Օրմանեան Սրբազան իր «Ազգապատում»ին մէջ կ'ըսէ. «Միայն թէ, ինչպէս կ'երեւի, մթերելու եւ դրամագլուխ կազմելու

(1) «Ազգապատում» Գ. հատոր, էջ 3648:

(2) «Ժամանակ» հանդէս, Ստեփան Պ. Փափազեանի, Կ. Պոլիս, 1863 Յնվ. 4:


միտքը երբեք չէ ունեցած, այլ եկածը ծախսելով ու ունեցածը գործածելով, ինքն ալ գիտցած չէ իր կարողութեան քանակը (1): Պեղճեան կարօտներու ու փճանալու մօտ եղող քայքայուած ընտանիքներու նիւթապէս օգնած է, շինած է բազմաթիւ եկեղեցիներ, վարժարաններ և հանրային բարենպատակ հաստատութիւններ, օժտած է զանոնք թանկագին սպասներով և զարդերով. 1829ին Պոլսոյ աղքատներուն նուիրած է 100000 զշ. ու այն ատեն կազմուած Տնանկաց Մատակարարութիւնը, իր նախաձեռնութեան արդիւնքն է:

Բաց ի ստոյն մէջ Պեղճեան նպատած է օգտակար հրատարակութեանց: Հայ և Հայ կաթոլիկ համարիւն եղբարց միութեան գործին մէջ ամէնէն գլխաւոր դերակատարը եղած է, և «Հրաւէր Սիրոյ» տետրակով նուիրագործուած այդ միութիւնը զժբախտաբար ապարդիւն մնացած է կարգ մը չարանախանձ ու մոլեռանդ կաթոլիկներու կողմէ: Պեղճեանի շնորհիւն է որ Երուսաղէմի Ս. Փրկիչ վանքին Հայոց սեփականութիւն ըլլալն հաստատող հրովարտակին տիրացած է ազգը:

Օրմանեան Սրբազան կը գիտէ որ «Պեղճեանի անունը կը գովուի ու կ'օրհնուի իր շինած եկեղեցիներով ու զըզրօցներով, բայց ալ աւելի պիտի օրհնուէր եթէ շարք մը հաստատուն կալուածներ ալ մնացած ըլլային իրմէ, քան թէ մարգարտազարդ թագեր, ականակուռ խաչեր, ոսկեթել կերպասներ, ոսկի և արծաթ սպասներ: Բայց իւրաքանչիւր ոք կ'ոգեւորի իր ժամանակին ըմբռնումներով ու չապրիր սպազայ դարերու սկզբունքներով» (2): Մենք ալ մեր կողմէ դիտել կուտանք որ, եթէ Պեղճեանէ ետք եկողները գիտնային օգտագործել անոր հիմնած սկզբունքները իրենց ժամանակին ըմբռնումներով և երկրին մէջ տիրող օրէնքներու համաձայն, և աւելի չահա-

(1) «Ազգապատում» Գ. հատոր, էջ 3649

(2) Անդ, էջ 3650:



Ազգ. Պատրիարքարանի Շէնքը

քեր կերպով գործածէին, Պեղծեանի թողած գումարները այսօր աւելի արդիւնաւոր կ'ըլլային և շատ աւելի կը փառաբանուէր այդ գովելի սկզբանց հեղինակ անզուգական բարերարը: Պեղծեանի մարդասիրական հիմնարկութեանց ամէնէն կարեւորն է Ս. Փ. Ազգ. Հիւանդանոցը, որուն վրայ կը գուրդուրայ ամբողջ ազգը: Այս հաստատութիւնը շինուած ըլլալով 1833ին, այսօր 96 տարուան գոյութիւն մը ունի:

Պեղծեան կը հիւանդանայ 1832ին, Պրուսայի ջերմուկները կ'երթայ, սակայն դժբախտաբար հիւանդութիւնը կը ծանրանայ հետզհետէ: Սուլթան Մահմուտ կը տխրի իր մտերիմին հիւանդութիւնը լսելով ու իրիկուն մը մթնշաղէն ետքը անձամբ կ'այցելէ Պեղծեանի Ենիգարուի ծովեզերեայ բնակարանը: Պեղծեան օգափոխութիւն մը ընելու և Պալատին աւելի մօտ ըլլալու համար կը փոխադրուի Օրթաքէօյ, ուր սակայն 1834 Յունուար 3ին կ'աւանդէ իր հոգին առ Աստուած ու յուզարկաւորութիւնը կը կատարուի հանդիսաւորապէս: Օրմանեան Սրբազան Պեղծեանի մասին իր գրածները սապէս կը վերջացնէ.

«Պատմուածներուն հիմնուելով կրնանք վստահաբար եզրակացնել թէ. իբրեւ անհատական անձ, իբրեւ հաւատացեալ քրիստոնեայ, իբրեւ Հայ ազգի անդամ, իբրեւ մեծահարուստ աւագանի, իբրեւ հանրային անձնաւորութիւն, իբրեւ պետական պաշտօնեայ, իբրեւ քաղաքագէտ միտք, իբրեւ եւտազէտ հանճար, իբրեւ կայսերական խորհրդատու, ամէն շրջանակներու մէջ ալ անբասիր գործունէութիւն մը ունեցած և ընտիր բարեմասնութիւններով փայլած է իր բովանդակ կեանքին մէջ և արժանի է այն համբաւին զոր վայելեց ու կը վայելէ» (1):

Վերը ըսինք թէ, Պեղծեան Հայ և Հայ Կաթոլիկներու միութեան գլխաւոր դերակատարը եղած է. Պեղծեանի այս խաղաղասիրական ձգտումը նոյնիսկ գնահատուած է

(1) «Ազգապատում», էջ 3654.

Հայ Կաթողիկոսներու կողմէ: Յովհաննէս Աղայէկեան իբ
 ձեռագիր մնացած Կենսավէպին մէջ կը պատմէ թէ, «Միու-
 թեան գործը ձախողելէն ետքը երբ Կայսերական հրամա-
 նաւ Գաղատացի Կաթողիկոսներ կ'աքսորուին, այնպէս կը
 կարծուի թէ, այս անիրաւ պատժոյն հեղինակը Պեղծեան
 եղած ըլլայ»: Ու կ'աւելցնէ. «Թէեւ անոր բարեսրտու-
 թեան բնաւ չէր յարմարեր այս եղեռնական գործը բայց
 այնպէս կը պատմէին թէ քանի մը ականաւոր Գաղատացի
 Հայերուն հետ գժտելով, Պեղծեան անոնց համար միայն
 այս թակարգը լարած էր և ետքը թագաւորին ցասմանը
 դէմ դնել չի կրնալով, պատժոյն տարածման պատճառ ե-
 ղած էր: Սակայն Պեղծեանին մահուանէն շատ տարիներ
 ետքը նոյն իսկ Հռոմէականաց վկայութեամբ հաստատ-
 ուեցաւ որ Գաղատացի երեւելեաց ինքնագլուխ աղգ ձե-
 ւանալու մուշնախանն փափաքն ու այն նպատակով ըրած
 հնարիմաց ձեռնարկին պատճառ տուած էր այս աւերնե-
 րուն ու Պեղծեանի պէս բարեսիրտ մարդը յանիրաւի բամ-
 բասուած էր»:

Պեղծեանի կեանքին այս գիծերը վերջացնելու առ-
 թիւ. կ'ուզենք հետեւեալ անտիպ մէկ անէքթօտն ալ յի-
 շել հոս, քաղելով վերոյիշեալ ձեռագիր Կենսավէպէն,
 ապացուցանելու համար թէ, Պեղծեանի՝ արքունիքի մէջ
 ունեցած ազդեցութիւնը ո՛ր աստիճան էր:

«Սուլթան Մահմուտ Պէյլէրպէյի պալատան պարտէզին
 մէջ աւազան մը ունենալ ուզելով, ճարտարապետին կը
 պատուիրէ որ շուտ մը շինուի. ուստի ուրիշ գործերը
 թողլով՝ իսկոյն սկսեր և գիշեր ցերեկ աշխատելով, քանի
 մը շաբթուան մէջ աւարտելէն վերջը, եզերքին քարերը
 շարելու միջոցին՝ թագաւորը Կէօք Սուլի զբօսավայրը
 երթալու կ'ըլլայ. և ճարտարապետներուն, — Պալեան
 Կարապետ և Սերվերեան Յովհաննէս ամիրաները—որովհետև
 փութանակի կատարելու համար երկուքն ալ միշտ գործին
 գլուխը կը գտնուէին, խտաիւ կը պատուիրէ որ շուտով ջուր
 կապեն որպէսզի իրիկունը վերադառնալուն լեցուն տեսնէ,
 ու կ'երթայ: Արքունի հրամանին կատարմանը համար՝
 ջանքերը կրկնապատկուած միջոցին՝ Պեղծեան վրայ հաս-

նելով՝ «Հոս աւազան չի վայրեր, շուտով քակեցէք. ես
 տիրոջը կը խօսիմ որ վերը շինուի» կ'ըսէ: Ճարտարա-
 պետը կ'աղերսեն որ նախ թագաւորը հաճեցնէ, որովհետև
 իր սենեակին առջև և խիստ խնամով շինել տուած էր.
 սակայն Պեղծեան գարձեալ կը սնդէ որ իսկոյն քակել
 սկսին: Երկուայրի սուրբ մը մէջ կը մնան խեղճերը, որով-
 հետև թէ թագաւորին զայրոյթն և թէ Ամիրային սխա-
 կալութիւնը հաւասարապէս վտանգաւոր էին, ուստի սըր-
 տատորփ կը պարտաւորուին հնազանդիլ անոր, որ քակե-
 լու սկսիլ տալէն վերջը կը հեռանայ:

«Իրիկունը ուշ առնել, թագաւորը գալու միջոցին Պալ-
 եան վախէն կը փախչի, որովհետև տակաւին զահճի պաշ-
 տօնը տիրելուն՝ բարկացայտ ակնարկ մը միայն բուսական
 էր զիրենք գլխատելու, և կը մնայ մինակ Յովհաննէս Ա-
 միրան ու սարսափահար կը ներկայանայ առեւակերպ
 արքային՝ որ յանկարծ աւազանին աւերակը նշմարելով,
 զայրագին կը կանչէ հեռուն սմբած ճարտարապետը: Իսկ
 անիկա գրեթէ մեքենապէս մերձենալով, հազիւ կը հաս-
 կըցնէ պատճառը և հիացմամբ կը դիտէ որ Պեղծեանի ա-
 նունը իսկոյն կը փարատէ թագաւորին ձակտէն բարկու-
 թեան ամպերը, ու հանդարտօրէն. «Ուրեմն շուտ մը ան-
 յայտ ըրէք» բսելով կը մեկնի:

«Պէտք է դիտել որ մայրուս մտքին ազատութիւնը
 այսքան հրամայական եղանակով բառնալ՝ հասարակ բա-
 րեկամներու մէջ անգամ ներելի չէ, և առանց նախապէս
 համոզելու, ինքնովին տնօրինումը, մանաւանդ իր տան
 մէջ, խիստ աշխնդակ է: Սակայն Սուլթան Մահմուտի
 պէս մեծամիտ անձ մը, որ պատուոյն խիստ նախանձայոյզ
 էր, Պեղծեանի միայն կը ներէր այս աստիճան համարձա-
 կութիւնը, որ այսպէս հրապարակաւ և շատ մը գործա-
 ւորներու առջև կատարուելէն կրնայ կարծուիլ որ, թե-
 րևս նախապէս միաբանած ըլլան, որպէսզի թագաւորին
 անհամեմատ վարկումը հոշակուելով, նախարարներն ալ
 ակնածին Պէղծեանէն ու լիովին պատուեն զայն, որ արդա-
 րեւ յարգանաց արժանի էր:»

Պեզնեանի քառուն բարեգործութեան անխիպ նմոյս մըն ալ

Ահաւասիկ Պեզնեանի Բարուն մէկ բարեգործութիւնն ալ, զոր կը բաղնէր Յովհաննէս Աղայէկեանի ձեռագիր Կենսավէպի Բ. հատորէն.

Հռովմէական հայ սեղանաւոր մը, անակնկալ պատահարներէ հարուածեալ, թէեւ արտաքին վարկը անայլայլ բայց ներքին վիճակը վերջին անձկութեան հանդիպեր է: Քանզի իր գլխաւոր առուտուրը տէրութեան գանձուն հետ ըլլալով, ատենէ մը ի վեր հոն գոյացած ծանր պարտքերուն փոխարէն՝ իր բնակած հոյակապ տունը, զոր նոր շինած է եղեր, գաղտնապէս գրաւ դնելէն ի գատ, ուրիշ շարժական կարանեաց շատն ալ ծախելով, եւ այլեւայլ պարտատեարց բերանը ծածկելով՝ կը ջանայ եղեր համբաւը անարատ պահել, որպէսզի նոր ձեռնարկի յաջողուածով մը՝ գործին խրամատը խցէ ու ապագան գոնէ չափաւորութեամբ ապահովելով՝ ծերութեանը անմխիթար չի մնայ: Բայց յայտնի է թէ գանձատունը՝ անոր վրայ ունեցած վատահոլութիւնը դադրեցնելով, բնականաբար մարդուն վերահաս անկալութեանց աղբիւրը կը ցամբեցնէր: Հետեւաբար խեղճին վիճակը օր ըստ օրէ ծանրանալով, այն ատիճանին հասեր է որ տնական մանր պարտքերն իսկ չէ կրցեր վճարել, եւ օրական ուտեստի նուազութեան են թարկուեր է: Միւս կողմէն գանձատան գործն ալ երկարելուն պատճառաւ, պաշտօնեան սկսեր է ստիպել որ տունէն ելլէ ու ծախելով պարտքը վճարէ: Ուստի թէ անոր հրաւիրակներէն եւ թէ ուրիշ հետամուտներէն ազատելու համար տանը մէջ պահուած միջոցին, լծակցին վրայ ալ հիւանդութիւն մը հասնելով, ալ խելագարելու կը մերձենայ: Այս դառնաղէտ վիճակին մէջ մարդը՝ հիւանդին հաւ մը հայթայթելու հարկաւորելով, Կիրակի առտու մը կանուխ տանը դուռնէն դուրս կ'իյնայ եւ առանց որոշ նպա-

տակի, քանզի ճարը հատած էր, այլ միայն անակնկալ դէպքի մը հանդիպմամբ՝ քանի մը դրու՞ծ ետք ձգելու համար, Աստուծոյ անհուն օգնութիւնը հայցելով, կը սկսի նեղ ու ամայի փողոցներէ փախստեայ ընթացք մը շարունակել:

Նոյն միջոցին Պեզնեանն ալ եկեղեցի երթալու համար՝ իր տունէն ելած ըլլալով, ճամբուն վրայ պատահաբար այս խեղճը կը դիմաւորէ որ անտարբերաբար կ'երթար, ու այսպէս մէկզմէկօւ ներհակ ընթացքով իրարմէ կը հեռանան: Վտանգեալն իր կսկիծովը գրաւեալ՝ բնաւ չէ կրցեր նշմարել դէմն ելած բախտը, կամ թերեւս իր հոովմէական ըլլալուն խորշած ըլլայ. բայց աւելի հաւանական է չի նըշմարելը՝ որովհետեւ լուսահոգիին համբաւեալ առատաւորութիւնը անշուշտ պիտի քաջալերեր զինքը, գոնէ առձեռն նպաստ մը խնդրելու, որուն փոքրիկ տուրքն իսկ ուրիշներէ տասնապատիկ աւելի ըլլալուն՝ տարակոյս չէր կրնար ունենալ:

Որպէս եւ իցէ՝ սա ստոյգ է թէ մարդը առանց նշմարելու կ'անցնի ու իր ընթացքը կը շարունակէ: Սակայն յօժարամիտ ու զգայուն բարեգործը կանգ առնելով կը դառնայ, մարդուն մոլորագին քայլերը ետեւէն կը դիտէ ու աչքը չի բռնելով ճամբէն ետ կը դառնայ եւ եկեղեցւոյն մօտենալով կը կանչէ զայն իր քովը եւ անոր ապշութեան պատճառը կը հարցնէ: Հոգի կ'առնու խեղճը եւ վիճակը վեր ի վերոյ յայտնելէն ետք՝ ներկայ պիտոյիցը նպաստ մը կը խնդրէ: Ամիրան իսկոյն կէսնոց քսակ մը հանելով անոր յանձնելէ վերջ, կ'աւելցնէ.

— Եղբայր, առ այժմ ասով տանդ պէտքը հոգայ ու մեր ժամերգութեան աւարտու: Էն ետք իմ տունս հրամմէ ուր ձեզ պիտի սպասեմ եւ հոն երկար կը տեսնուինք: Աստուած ամենուս միօրինակ ողորմած է, ուստի անոր ապաւինելով պէտք է տխրութիւնը չափաւորել, կ'ըսէ եւ կը դառնայ նորէն իր ճամբուն, եւ մարդն ալ ձեռքին ստակովը ուրախացեալ՝ կ'երթայ իր պիտոյքը հոգալու:

Մարդը մխիթարուած, կը փութայ հաստատ քայլերով երթալ իր սովորական նպարավաճառին խանութը, որուն արդէն պարտքը դիզուած ըլլալով՝ առջեւէն անցնելու ակ նստելուն՝ ճամբան փոխած էր, բայց հիմա համարձակ կ'երթար հին հաշիւը գոցելու եւ նորէն սկսելու: Ուստի առժամայն հարկաւոր հաւն ու այլեայլ պիտոյքներն եւս պատշաճօտել տալէն ետք նպարավաճառին հաշիւը ամբողջացնելով երբ ստակ վճարելու համար քսակի բերնին կապը կը բակէ, դեղին փայլակ մը կը ցոլայ աչքին՝ յորմէ՛ յանկարծ կ'այլալի խեղճը, եւ տեսածը պատրանք կարծելով կրկին կը դիտէ ու կը համոզուի որ՝ ձեռքինը ստոյգ ոսկի էր: Իսկոյն կը փութայ առած նպաստը տուն տանիլ ու անկից երթալ Ամիրային տունը, ինչպէս որ ժամագրութիւն ընդունած էր: Պեզճեանին սպասաւորները իրենց պատուիրուածին համաձայն, մեծարանօք կը դիմաւորեն անձանօթ եկողը ու կը տանին զայն նախասենեակը՝ ուր անձկանօք կը սպասէր տանտէրը: Մմիրան յարգանօք կը հրամցնէ զայն իր քով բազմելու, եւ սովորական մեծարանքները լիովին կատարելէ ետք՝ ազնուապէս կ'առսջարկէ անոր որ իր ներկայ վիճակին վրայ մանրամասնաբար տեղեկութիւն մը տայ:

Կը պատմէ մարդը մի ըստ միօջէ իր կրած փորձանքներն ու ներկայ հանգամանքները, բնակարանէն իսկ արտաքսուելու մերձակայ վտանգը բացատրելով, ինչպէս վերը պատմած էինք: Ամիրան այս տխուր պատմութիւնը կաբեկցութեամբ լսելէ վերջ, յուսալի ժպիտով մը կ'ըսէ.

Աստուած երբեմն այսպէս կը փորձէ իր ծառաները, բայց բնաւ չի լքաներ եւ մեզի խիստ ծանր երեւցող աղէտից դարմանը դարձեալ ինք կը հնարէ, ուստի հարկ է միշտ հաստատ յոյսով համբերել:

Սմիրան քիչ մը խորհելով կը յարէ.

— Առ այժմ ութ օր միջոց տուր որ հետագօտեմ ու տեսնենք թէ ի՛նչ միջոցներով կրնանք ճար մը հոգալ, իսկ

հրամանքդ զնա տունդ հանգիստ նստէ եւ միւս Կիրակի դարձեալ այս ժամուս հոս կը տեսնուինք, ըսելով կը ճամբէ:

Այս դէպքն ինձ պատմողը, որ ականատեսն էր, աւելցուց ի՛է նոյն ութ օրուան մէջ փորձանաւորը սփոփալի գուարթութիւն մը ստացած էր ու մեծ մխիթարութեամբ անցուց ընդունւած պայմանաժամը: Որոշեալ ժամուն զացեր էր նորէն Սմիրային որ դարձեալ մեծարանօք ընդուներ եւ խնդալով.

— Աչքդ լոյս, Տէր ընդ մեզ է, ըսելէ վերջ, ծոցէն թուղթ մը հաներ ու հիւրին մատուցանելով, տունդ բարով վայելես ըսեր է:

Մարդը ապշելով կ'առնէ թուղթը ու կը նայի որ ինք իր ձեռք զանձուց պաշտօնէին յանձնած տան վաւերագիրն է տուածը: Ասկէց ի գաւտ, կը կրկնէ բարեգործը.

— Պէտք է զիտնաս որ զանձատան պարտքդ գոցուած է եւ հին վարկդ ալ նորէն հաստատուած, հետեւապէս ագաւտ ես այսուհետեւ դարձեալ յարաբերութեան մտնելու՝ որով կրնաս շրջանդ ընդարձակել ու վիճակդ առջի կարգին դնել. ուստի հարկ է որ վաղը անձամբ ներկայանաս ելեւմտից նախարարին եւ այս շնորհին համար իրեն շնորհա կալութիւն յայտնելու առիթով նախկին դիրքդ նորոգես: Յորմէ բաժնուելէ վերջ գրասենեակդ բազմելու կ'երթաս, որպէսզի հասարակաց վարկն ալ վերահաստատուի, իսկ առձեռն դրամագլխոյ համար առ այժմ ասոնք սիւսին տար բսելով, առջի շնորհած պարկին պէս երկու հատ եւս, այսինքն քսան հազարի գումար մը եւս կը նուիրէ:

Մարդը այսպիսի ազնուութեամբ մատուցեալ բարիքէն բոլորովին ապշած, ինչ ըսելիքը մտքին մէջ ամփոփելով, վրայ բերելու չի մնար, բարեգործը միջոց չթողլով՝ իսկոյն ոտքի կ'ելնէ ու լրջաբար կը յարէ.

— Ներում կը խնդրեմ հարկաւոր գործի մը համար հեռանալուս, բայց կը բաղձամ որ եթէ դարձեալ օժանդակութեանս պէտք ունենաս՝ չբաշուիս նորէն ինձ դիմելու, ու կը բաժնուի:

Մայր Եկեղեցւոյ վարժարաններ

Մայր Եկեղեցին դարերու ընթացքին եղած է նաեւ կրթութեան և կրօնական դաստիարակութեան վարժարան: Գիտենք որ 1480ին Մատթէոս Արեղայ իր աշակերտներուն կ'ուսուցանէր այս եկեղեցւոյն հովանիին տակ: Կոլոտ Յովհաննէս Պատրիարք տպարան հաստատելէն զատ, բացած է նաև ուսումնարան մը բանասիրութեան և Հայ մատենագրութեան համար 1719ին: Կոլոտ կը հաւաքէ լեզուագէտ վարդապետներ և ասոնք կը դասախօսեն: Կը հաստատէ նաև թանգարան մը, որ ի վերջոյ Նալիան Յակոբ Պատրիարքի կողմէ աւելի կը ձօնացուի: Բազմաթիւ գիրքեր պարունակող այս մատենագրանը Նալիան կը թողու Մայր Եկեղեցւոյ:

1790ին Շնորհք Մկրտիչ ամիրայ կը հաստատէ թաղային առաջին վարժարանը, որ 1830ին կը վերաշինուի Պեղճեան ամիրայի կողմէ և կը յորջորջուի Պեղճեան վարժարան: Քիչ մը հետոն կը հաստատուի աղջկանց վարժարանը Լուսաւորչեան անուամբ: Կը կազմուի նաև աղջկանց յատուկ արհեստանոց մըն ալ 1820ին: Պեղճեան հաստատած է նաև 1832ին Դպրաց Դասը և Տնանկաց Մատակարարութիւնը: Բացուած են նաև մասնաւոր վարժարաններ, որոնք քիչ ժամանակ տեսած են: Լուսաւորչեան վարժարանը այրած է 1916ին պատահած մեծ հրդեհէ մը:

Հայ Մամուլը Մայր Եկեղեցւոյ

հովանիին տակ

Դարերու ընթացքին Մայր Եկեղեցւոյ հովանիին տակ հաստատուած է Հայ Մամուլը: Կը կարծուի որ Երեմիա

Չերեպի 1667ին հիմնած ըլլայ առաջին տպարանը, թէև առ այս որոշ ապացոյց մը չունինք:

Սարգիս ոմն և Գրիգոր Մարգուանցի կը հիմնեն տպարան մը, ուրկէ լոյս տեսած են.— «Տաղարան»՝ 1698ին, «Տօնացոյց»՝ 1701ին, «Պղնձէ Քաղաք»՝ 1708ին, «Յայտմաւուրք»՝ 1706 և 1730ին, «Ազաթանգեղոս»՝ 1709ին, «Շարակնոց»՝ 1710ին, «Ոսկերերան»՝ 1710ին, «Ձենոր Գլակ»՝ 1719ին, «Գիրք Տոմարաց Հայոց»՝ 1723ին, «Ներքողեանք»՝ 1734ին և չն.:

Այս հրատարակուած գիրքերուն մէջ գրուած է. «Ընդ հովանեաւ Սրբուհոյ Աստուածածնին որ յարքայանիստ քաղաքի» կամ «Ընդ հովանեաւ Ս. Աստուածածնի բաղմահաւաք Եկեղեցւոյն որ ի քաղաքիս Կոստանդնուպոլսոյ» և կամ «Ընդ հովանեաւ Եկեղեցւոյ Տիրամօրն որ առ Պատրիարքարանու»:

1790ին Շնորհք Մկրտիչ ամիրայ ալ կը հաստատէ տպարան մը և կը յանձնէ Մատթէոս Դպիրին որ մինչև 1800 կը հրատարակէ «Յուպ Քահանայից», «Մաշտոց» և այլ եկեղեցական գիրքեր: 1800էն յետոյ ուրիշներ կը շարունակին տպարանը, հրատարակելով գիրքեր պատմաբանասիրական և կրօնական: Նալիան Յակոբ Պատրիարք կը հրատարակէ այդ տպարանէն «Տետրակ Զուհայնութիւնէ Կենցաղոյս»՝ 1805ին, «Քերականութիւն»՝ 1808ին, «Գիրք Աղօթից Ս. Կուսին»՝ 1817ին, «Գիրք Աղօթից Նախնի Ս. Հարչ»՝ 1822ին, «Գիրք Աղօթից Եփրեմ Խուրի»՝ 1823ին, «Խորհրդատետր»՝ 1823ին: Այս գիրքերուն վրայ գրուած է «Ի Մայր Դպրատան» կամ «Ի Մայր Եկեղեցի» կամ «Ի Մայր Ս. Աստուածածնի» և կամ «Ի տպարանի Ս. Աստուածածնայ Խումխարուի» (1): 1825էն յետոյ կը դադրի այլևս տպարանը:

(1) Մատենագրութիւն, 2. Գ. 2. Վեհեաթիկ, 1382:

Ազգ. կրթութիւնը քաջաբերելու նպատակաւ կազմուած են նաև ընկերութիւններ՝ Լուսաւորչեան՝ 1844ին, Ընթերցասիրաց 1852ին, Եղբայրսիրական՝ 1857ին, Տիկնանց 1864ին և ուրիշներ: Կարելի չէ չյիշել Չորից Թաղից Աղքատախնամ Մարմինը, որ հաստատուած է 1886ին: Այս մարմինը բարերար դեր մը կատարած է չորս թաղերու կարօտ հիւանդներու բժիշկ, դեղ և սնունդ մատակարարելով և իսկական աղքատներու խնամատարութեան հոգն ստանձնելով:

Անցեալէն յուշեր

Այս եկեղեցին կապուած ըլլալով Պոլսոյ Պատրիարքութեան՝ իբրև աթոռանիստ եկեղեցի. անոր սրբազան կամարներուն տակ տեղի ունեցած եկեղեցական բարձրագոյն հանդիսութեանց եւս հոս արձագանգ ըլլալ պարտք կը համարինք: Այսպէս 1666ին Եղիազար Այնթապցին, որ ինքնակոչ Կաթողիկոս և Պատրիարք եղած է, կը կարծուի որ այս եկեղեցւոյն մէջ կատարած է եօթը վարդապետներու եպիսկոպոսական ձեռնադրութիւնը: Այս Այնթապցին, որ յետոյ իբրև Ընդհանուր Հայրապետ՝ էջմիածին կը հրաւիրուի, հաւանաբար այս եկեղեցւոյն մէջ եպիսկոպոս ձեռնադրած է Կրպօ երէց Պատրիարքը, այսինքն Կարապետ Վարդապետը:

Սիսի պաշտօնաւոր Մատթէոս Կաթողիկոս Սարը կոչուած 1746 Ապրիլ 8ին Մայր Եկեղեցւոյ բակին մէջ աստիճաններ ղնել կուտայ և եպիսկոպոս կը ձեռնադրէ երեք վարդապետներ, որոնցմէ մէկն է Մարտիրոս (Մրտօ) Պատրիարք Երզնկացի Քիւլհանճի մականուանեալ: Այս ձեռնադրութիւնը սակայն դժգոհութիւն կը պատճառէ Աղղին մէջ, նկատի առնուելով անոր պաշտօնաւոր վիճակը:

Աստուածատուր Կաթողիկոսի մահէն ետքը (1725) Մայր Եկեղեցւոյ մէջ գումարուած մեծ ժողով մը Կաթողիկոս կ'ընտրէ Էնկիւրիի Առաջնորդ Ծծկեր կոչուած Ուլ-



Յովնանէս Կոլոս Պատրիարք

նեցի եպիսկոպոսը: Կարապետ Եպիսկոպոս Պոլիս կը հրա-
ւիրուի և Մայր Եկեղեցւոյ մէջ կը ստանայ Կաթողիկոսա-
կան Օծումը 1726 Փետրուար 16ին մասնակցութեամբ 12
եպիսկոպոսաց: Նորապօսակ Կաթողիկոսը երեք օր ետքը
դարձեալ Մայր Եկեղեցոյ մէջ եպիսկոպոս կը ձեռնադրէ
Պոլսոյ Պատրիարք Կոլոտ Յովհաննէս Վարդապետը: Քանի
մը օրեր ետքն ալ Կոլոտի աշակերտ Երուսաղէմի Հաննա,
Թովմաս և Քէօթահիայի առաջնորդ Մարտիրոս Վարդա-
պետները եպիսկոպոս կ'օժէ:

Այս եկեղեցւոյն մէջ տեղի կ'ունենայ 1784 Սեպտ. 6ին
Սիսի Թէոդորոս նորընտիր Կաթողիկոսին օժման արարու-
ղութիւնը, որու կը մասնակցին 6 եպիսկոպոս, 12 վար-
դապետ և 24 քահանայ և սարկաւապունք:

Երուսաղէմի վանքին խանգարում վիճակը բարելա-
ւելու համար, 1791 Յունիս 23ին Մայր Եկեղեցւոյ մէջ
Զաքարիա Պատրիարքին կողմէ կարեւոր ժողով մը կը
գումարուի մասնակցութեամբ ազգին երեք աթոռներու
հոգեւոր պետերուն:

Մայր Եկեղեցւոյ մէջ է որ Կաթողիկոսական ընտրու-
թեան երեք ժողովներ կը գումարուին 1753ին, 1756ին և
1759ին:

Կաթողիկ Հայերու մեր Եկեղեցիէն անջատուած վեր-
ցնելու և Մայրին Եկեղեցւոյ գիրկը հրաւիրելու համար
դարձեալ Մայր Եկեղեցւոյ մէջ է որ գումարումներ տեղի
ունեցած են 1737էն ի վեր զանազան շրջաններու մէջ և
182 ին մասամբ բազմացուած միութիւնը տեղի կ'ունենայ
չտա մը զոհողութեանց՝ փոխարէն ու կը յանդի մինչև
«Հրաւէր Սիրոյ» տետրակին հրատարակութեան և սակայն
դժբախտաբար ազարդիւն կ'անցնի:

Չինք ուզեր անդրադառնալ պատրիարքական ընտրու-
թեանց առթիւ այս եկեղեցւոյն մէջ տեղի ունեցած պա-
րագաններուն մասին, միայն սա ըսենք որ հին առեւտրու-
յաճախակի պատրիարքներ կը ապաւիճին ու կը նստին և

առ այս եղած ծախքերը կը բեռցուէին եկեղեցիներու վրայ՝ Այսպէս 1641էն մինչեւ 1650 եօթը պատրիարքներ փոխուած են և այս պատճառով ալ Պոլսոյ վեց զլխաւոր եկեղեցիները, այսինքն Գուճաքուլի Ս. Աստուածածին, Սամաթիոյ Ս. Գէորգ, Պալաթու Ս. Հրեշտակապետ, Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ, Չինիլի Համամի Ս. Նիկողոս և Հիսար Տիպիի Ս. Սարգիս եկեղեցիները 40000 զրշ. պարտքի մը տակ ընկճուած էին. Սոոյ Փիլիպպոս Կաթողիկոսը, որ այն ատեններ Պոլիս կը գտնուէր, ամէն կողմ չըջելով և քարոզելով ութն ամսուան մէջ այդ պարտքը վճարած է:


Մայր եկեղեցւոյ հնամենի կամարներուն ներքեւ է որ պերճախօս քարոզիչներ, հոետոր աստուածաբաններ կուռ ու հրահանգիչ քարոզներ ու դամբանականներ խօսած են և տեղի ունեցած են իմաստալից ատենաբանութիւններ և բազմաթիւ հաւատացեալներ, այրերը Մայր Տաճարը և կիները Ս. Որդւոց Որոտման Տաճարը կը լիցնէին: Ընդհ. պատերազմէն յետոյ թէ Ս. Խաչի և թէ Որդւոց Որոտման Տաճարները հայ գաղթականութեան իբր պատսպարան յատկացուած ըլլալով, այսօր անգործածելի վիճակի մը հասած են և նորոգութեան համար կը կարօտին հազարաւոր ոսկիներու:

1860էն յետոյ ազգ. կանոնադրին համաձայն, բոլոր պատրիարքական ընտրութիւնները կը կատարուին Մայր եկեղեցւոյ մէջ և նոր պատրիարքներ այս տաճարին Աւագ Սեղանին առջեւ կը կատարեն իրենց պատրիարքական ուխտը:

* * Այս եկեղեցւոյն մէջ թաղուած են բացի Պեղճեան Յարութիւն ամիրայէ, վառօղապետ Պողոս պէյ Տատեան 1863, Ունճեան Գէորգ ազա 1878, Էգնաեան Տիգրան ազա 1883, Տիկ. Տիրուհի Կարապետեան 1890, Մանուկ ազա Սմբատեան 1903: Եկեղեցւոյ Աւագ տաճարին գաւիթը թաղուած է Ներսէս Պատրիարք Վարժապետեան 1884, որուն վրայ գրուած է չքեղ դամբան մը սա արձանագրութեամբ.



ՆԵՐՍԷՍ ՊԱՏՐԻԱՐԻՔ
1874-1884



Ներսէս Պատրիարքի Դամբարանը

Մ Ա Հ Ա Ր Չ Ա Ն

Տ. Տ. Ներսէս Վարդապէս Վարժապետեան

Քազմարդին Արեւախնայոսի

Ազգասէր Պատրիարքին

Հայոց Թուրքիոյ

1837—1884

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի

Աս հանգչի

Տ. Ներսէս Արեւախնայոս Վարժապետեան ծնեալ
'ի Խասգիւղ Կոստանդնուպոլսոյ Յամին 1837 'ի
28 Յունվարի որ եղեալ Արդինական Վարդա-
պէս բանին կենաց եւ առաջնորդ վիճակին Նի-
կովիդիոյ, կարգի 'ի Պատրիարքութեան Օսմանեան
Հայոց 'ի 14 Ապրիլի 1874, վարէ զպատօսն զամս
սասն անընդհատ, ընտրի 'ի Կաթողիկոսութիւն ա-
մենայն Հայոց 'ի յ'9 Մայիսի 1884 եւ վախճանի
'ի Պատրիարքութեան 'ի 26 Հոկտեմբերի 1884:

Ռ Յ Լ Գ


Միթէվէլլիներ եւ իրենց հաշիւներ

Հին ատեններ սովորութիւն էր որ իւրաքանչիւր եկեղեցի իր միթէվէլլին ունենար որ պատասխանատու էր եկեղեցւոյ մատակարարութեան և ասոնք ալ իրենց կողմէ չորս կամ աւելի անձեր կը կարգեն եկեղեցւոյն, գործակալ կամ խապղիմալ անուշով, որոնք կը հսկէին ու գործառնութիւններ կը կատարէին: Միթէվէլլիներ կ'անուանուէին ընդհանրապէս ժամանակին ազգեցիկ ամիրաները և կը հաստատուէին օրուան Պատրիարքէն: Իսկ ասոնց ներկայացուցիչները, որոնք համազօր էին այսօրուան թաղ. խորհուրդներու, եկեղեցւոյ հասոյթներն ու ծախքերը կը մատակարարէին և վազֆները կ'արդիւնաւորէին: Այսպէս Մայր եկեղեցին ալ ունեցաւ իր միթէվէլլիները և ներկայացուցիչները: Մայր եկեղեցւոյ գանձատան մէջ պահուած են մէկ քանի հին հաշուական տետրակներ, ուր հասոյթ և ծախք արձանագրուած են: Այս տետրակներէն մին 1796ին բռնուած է, ուր երկու տարուան հաշիւ կայ: Թէև այս հաշիւները բռնուած են շատ պարզ կերպով, ասանց տոմարակալական նրբութեանց, քայց կ'արժէ կարգալ տետրակին սկիզբը գրուած հետևեալ հետաքրքրական արձանագրութեան ձեւը.

«Հայր և Որդի և Սուրբ Հոգի Աստուած ճշմարիտ, զու ատաջնորդեա, տուր զօրութիւն ծառայիցդ քոց կեցո զորդի ազախնոյ քոյ և արա տա իս նշան բարութեան:

«Յամի Տեառն մերոյ 1796 Յունիս 21էն, Տօն եկեղեցւոյ, կարգեա էաք ի թուականութեան Հայոց ՌՄՆՆ 1245+551=1796 և ի թուականութեան տաճկաց 1211 Մուհարրէմի սկիզբէն սկսեցաք թէֆթէրս զայս իրատ և մանրաֆն պէյան լինելն:

«Ըստ հրամանի և կամաց Սրբազան Ազգասէր Պատրիարքի Տեառն Չաքարիա Աստուածարտն Վարդապետի և համայն իշխանաց և միթէվէլլի Մհա. Յովհաննէս ամի-



Մայր եկեղեցւոյ մեծադիր «Թաղուձը»

րային հաւանութեամբ, որ ի կողմանց մեք ի ներքոյ նշանակեալ և վեցերին եղբարքս սարաֆ Մհտ. Օհանն, քուրքճի Մհտ. Կարապետն, Թիւլպէնտճի Մհտ. Սեթեան Պր. Յովարն և պէղազ Պր. Մերկերոսն, և քերէստճի Մհտ. Ստեփանն, և Ոսկերիչ Սարաճեան Պր. Կարապետն կարգեցաք ի պաշտօն և եկեղեցականութիւն Սրբոյ Տանս յանուն կառուցեալ մեծահամբաւ Ս. Աստուածածնայ Եկեղեցուն, յապաքէն մտերմութեամբ ծառայել և սպասուորել հարազատապէս և հաւատարմութեամբ, զոր Տէր Աստուած մշակ առանց ամօթոյ արասցէ. Սուրբ Եկեղեցիս Աստուած հաստատ պահեսցէ. ամէն»:

Դիտելի է որ հաշուց տետրակը կը սկսի իբրև տարեգրութիւն Մուհարրէմի մէկին և կը վերջանայ յաջորդ Մուհարրէմէն որ մը առաջ, Տետրակին միւս էջին վրայ գըրուած է. «Աստուծով սկիզբն արարաք Լուսաւորչի երն ի վիրապէն Կիրակի աւուր Յունիսի 21ինճի օրէն»:

Ահա այդ երկու տարուան հաշիւները.

1796 ՅՈՒՆԻՍ 21 - 20 ՅՈՒՆԻՍ 1797

Հասոյթ	21668	դր.
Ծախք	13482	» 16 փր.
	8185	» 24 »

1797 ՅՈՒՆԻՍ 21 — 20 ՅՈՒՆԻՍ 1798

Հասոյթ	26262	դր.
Ծախք	14322	»
	11940	»

Տետրակին ծախուց բաժնին մէջ ուշագրաւ են ստարճանապօսութիւնք.

8	դր. 10	փր.	Մեծաւորին (Պատրիարքին) ժամուց
4	»		Վեքիլին »
3	»		Կարապետ Վարդապետին
6	»	10	»
5	»		Երուսաղէմի Վէքիլ Յակոբ Վրդ.ին
1	»	20	»
			Աւագերէցին
			Ժամկոչաց նուէր

Ծաղկազարդի օրուան ծախուց մէջ նշանակուած է լուսարարներու 21, ժամկոչներու 2, կանանց կողմի վարդապետին ժամուց 2 դր. : Նոյնպէս 12 օխա սերը (գայմագ) այն ատեն 2 դր. : 25 փարայի առնուեր է :


Ահա ուրիշ հաշիւի տետրակ մըն ալ, եկեղեցիին վերջին շինութենէն ետքը :

1835 ՅՈՒՆՎԱՐ 1 — 31 ԴԵԿՏԵՄԲԵՐ


Հասոյթ	256404	դր.	
Ծախք	244572	»	25 փր.
	-----		— »
	11831	»	15 »

Ասոր ալ արձանագրութենէն կը տեսնուի որ, այս հաշիւը միւթէվէլլի Մհա. Մարտիրոս տեսնելով, խազրիմալութիւնը կրկին կը յանձնէ Մհա. Պետրոսի և Պր. Ստեփանին՝ հետեւեալ մազթանքով. «Տէր Յիսուս Քրիստոս միւս տարուան հասոյթը արգիւնաւոր արասցէ և յարզի աշխատաւոր եղբարց կար և կարողութիւն պարզեւեացէ ամենօրհնեալ Մայր Ս. Աստուածածնայ անդառնալի բարեխօսութեամբ, ամենեքեանս մշակ առանց ամօթոյ արասցէ : Ամէն» :

Դժբախտաբար միւս տարին հասոյթը աւելի՛ նուազ կ'ըլլայ :



Աւագ Տաճարի աջակողմեան Ս. Յարութեան Մասուր



Աւագ Տաճարի ձախակողմեան Ս. Ծննդեան Մասուրը եւ Մկրտութեան Ս. ազանը

1836 Յունվար 1 — 31 ԴԵԿՏԵՄԲԵՐ

Հասոյթ	193589	ՂՐԶ•
Ծախք	183425	»

	10164	»

Կ'երեւի այն ատենի համար շատ կարեւոր եղող հասոյթի և ծախուց այսքան նուազ տարբերութիւնն է պատճառ, որ միւթէվէլլի Մարտիրոս նոր խազզիմալ մը կը կարգէ ու անոր կը յանձնէ այս զուտ հասոյթը:

Թէեւ չենք ուզեր տարակուսիլ անոնց ուղղամտութեանը վրայ, բայց թէ միւթէվէլլիներն ու խազզիմալները որ աստիճան խղճմտութիւն դրած են մատակարարական գործին մէջ, ասիկա մէկ մը Աստուած և մէկ մըն ալ իրենք գիտեն:

Մայր Եկեղեցւոյ գանձատան մէջ կը գտնուի խոշոր տետրակ մը, որ ամէնէն հինը կը կազմէ և 1784 թուականին կը վերաբերի: Մեծ Քիւթիւկ կոչուած այս տետրակին մէջ ամփոփուած են ոչ միայն ինը տարուան հաշիւներուն համառոտութիւնը, այլ և Եկեղեցւոյ սուրբ անօթներուն և սպասներուն ցուցակագրութիւնը մանրամասնութեամբ, գրուած ատենագրագիր Յովհաննէսի կողմէ, շատ գեղեցիկ ու կոթիկ գիրերով ու խնամով պահուած է ցարդ: Այս ինը տարուան հաշիւը կը վերաբերի ՌՄԻԴ—ՌՄԼԳ (1224+551=1775)է մինչև և 1233+551=1784: Ահա այդ հաշիւը.

71362 ՂՐ. 54 ստակ

71172 » 54 »

Յայնկոյս 5 նիւմէրոյին ճէմն է
Թէնզիլ որ է բոլոր մասրտֆն
ինն տարեկան, մինչ ի թարիխ
խիւլասային

Արձանագրութենէն այնպէս կը հասկցուի որ նախորդ միւթէվէլլին է եղեր Հօճա Յակօբ որ իր հաշիւները փոխանցեր է Առաքել ամիրայի և այս վերջինն ալ իր կարգին այսպէս կը շարունակէ. «Այսքան մտացեալ ստակն ճՂ զշ. (190) միւթէվէլլի Առաքել ամիրայի զիմմէթ կայ և մինչեւ ցայս տեղ և ի վերոգրեալ թարիխ հաշիւն միւթէվէլլիութեան իւրոյ տուեալ է ի յատեան Պատրիարք Հայր. Վարդապետին հանդերձ իշխանապետօք և գործակալիւք ի տեղս այս խիւլասա եղեալ ձեռամբ յատեանագրագիր յօգնականութիւն և ի ձեռն վերոգրեալ (վերոգրեալ միւթէվէլլի ամիրային) տուեալ և ի մի խիւլասա քիւթիւկի մուծիպով և կնքովք հանդերձ. իսկ այսուհետև նոր ի նորոյ իրատին և մասրաֆին 9 թղթահամար նիւմէրոյին գրելոց եմք: Եւ զայս 190 զրուշս հանեալ տեղւոյս իրատի սկիզբն գրեցինք:

Ի հաստատութիւն գրոյս եւ քիւթիւկիս
Եւ ծառայ Ս Ասուածածին Եկեղեցւոյ
միւթէվէլլի կարգեցեալ


ԱՌԱՔԵԼ ՊԵԿԵՆՅ

ԿՆԲԵԳԻ (ԿՆԻԲ)

«Տեսեալ զհաշիւս ստոյգ գոլով միւթէվէլլի Առաքել ամիրային հոգաբարձու իշխանապետօք և իշխանօք և ես կնքեցի խիւլասայս զայս:

ՊՍՏՐԻԱՐՔ ԶԱՐԱՐԻԱ ՎՍՐԳՍՊԵՏ

«Ի ժամանակի Տեառն Զաքարիա ազգասէր կարգացեալ Պատրիարքի Կոստանդնուպոլսոյ, խորհրդով և հաճութեամբ յարգի իշխանաց և խնամածու իշխանաց և Խուժ խաբուի Ս. Աստուածածին Պատրիարքանիստ Եկեղեցւոյն միւթէվէլլիութեան կարգեցեալ եղեւ հանդերձ չորեքին



Որդւոց Որոսման Եկեղեցին

խորհրդակցօք, այսինքն Պեկենց հանգց. Սարաֆ Մահտեսի որդի բարեպաշտ Առաքել ամիրայն միւթէվէլլի և նորին խորհրդակիցք Ասլան ամիրայն, Յակոբ ամիրայն, Մահտեսի Ստեփան Ամիրայն և Մահտեսի Կարապետ աղայն Փափայեան ի թուին Հայոց ՌՄԻԳ և Յունիսի Ա.ին մինչ ի թուոյն ՌՄԼԳ Յունիսի Ա.ին ինն տարեկան իրատից և մասրաֆից հաշուց խիւլասան եղևալ է ի տեղս յայնմիկ։

Առաքել ամիրայ ՌՄԼԸ 1238+551=1789 Սեպտ. 13ին կը վախճանի և Վէլլի խանի մէջ հաւաքուած ժամանակին ազգեցիկները արժանի կը տեսնան հանդուցելոյն տեղ միւթէվէլլի կարգել իլիմօնճիզատէ Մահտեսի Յովհաննէս աղայն, որուն կը յանձնուին բոլոր եկեղեցական անօթները, վազֆ տուներու յանձանձուծը և նազտ ստակները Ս. Աստուածածին Եկեղեցւոյն։

Այս քիւթիւկին մէջ, ինչպէս ըսինք վերև, արձանագրուած են խնամով բոլոր եկեղեցական գոյքերը ՌՄԻԵ 1225+551=1773 Մարտ 10ին Զաքարիա Պատրիարքին հրամանաւ և խորհրդով և գիտութեամբ չորս խորհրդականներու «զի առաջին սահմանեալ քիւթիւկն այրեցեալ եղև ի զպրատան հրկիզութեան» և այս քիւթիւկը գրեթէ արուեր է ատենագրագիր Յովհաննէսի, մի առ մի նշանակելով անօթները «ըստ թուոյ, ըստ կշտոյ և ըստ յատկութեան իւրեանց»։ Ահա այն ատենուան Մայր Եկեղեցւոյ գոյքերուն ամփոփուած մէկ ցուցակը.

	հաս
Շուրջառ ծանր և թեթև գարգանկարուած	107
Խորհրդանոցի վարագոյր	15
Մեծ վարագոյր	14
Փոքր վարագոյր	33
Փորուրար և բազպան	27
Սկիհի ծածկոց	56
Սաղաւարտ, վակաս մարգարտէ և արծաթեայ	44
Սեղանի գոգնոց	29

	հաս
Սեղանի սփռոց	17
Աւետարանի բռնիչ	20
Քաջի մահրամայ	15
Եպիսկոպոսական թագ, վակաս, Եմիփորոն և Փորուրար	7
Հողաթափ	2
Շապիկ և ուրար սարկաւազի	35
Սկիւն և մազզմայ (որուն 21 հատը Լալէլի խանի մէջ կնքուած սնտուկով և մնացորդը կը գործածուի եղեր)	38
Արծաթեայ խաչ	86
Արծաթեայ կենաց խաչափայտ	9
Կանթեղ և ջահ (ասոնց մէջ կան արծաթ կանթեղներ)	253
Բուրվառ	10
Գոտի հանդերձ գոլանիւք (որուն 31ը կը պակսի)	41
Սրբատուփ (որուն 4ը պակաս)	10
Քչոց, տապանակ, աղաւնի թապախ, շամտան (որուն 11ը կը պակսի)	44
Կրեանք՝ Աւետարան, Մաշտոց, Ժամագիրք, Շարական, Սորհրդատետր, Ճաշոց. Տօնացոյց (որոնց կարեւոր մասը ձեռագիր. նուիրողին յիշատակարանը կայ, բայց գիրքերուն յիշատակարանները չեն արձանագրուած	100
Զանազան զգեստեղէններ և անօթներ (որոնց մէջ կան ծանրագին զգեստ մը, զոր նուիրեր է ՌՄԵ (1205+551=1755) հանգց. Մուրատեան Պաղտասարի կողակից Սօֆիա խաթուն)	17

Ասոնցմէ զատ կայ նաև արձանագրուած մի առ մի պղնձեայ և փայտեայ բազմաթիւ անօթներ:

Վերը յիշուած եպիսկոպոսական թագերէն մին Բաղէշցի Յովհաննէս Կոլոտ Պատրիարքին կողմէ նուիրուած է իր աշակերտին՝ Յարութիւն Արքեպիսկոպոսի, պայմանաւ որ անոր մահէն ետքը յանձնուի Երուսաղէմի Աթոռին և

այնպէս ալ եղեր է, ինչպէս նաև ուրիշ կարգ մը անգործածելի անօթներ ևւն. Երուսաղէմի Պոլսոյ Փոխանորդ Սեֆերեան Սիմէոն Արքեպիսկոպոսի կողմէ գնուելով փոխադրուեր է Երուսաղէմ և այդ գումարով կալուածներ գնուեր է:

Ակնարկուած եպիսկոպոսական թագին արձանագրութիւնը սա պէս եղած է քիթիկին մէջ. «Ծանր թագ մը ականակուռ և մարգարտով զարդարեալ որ մէկ կողմն Ծնընդեան և Մկրտութեան պատկերօք և սոմ էլմաս քէօսթէկիվ և միւս կողմն Ս. Աստուածածնայ Ննջման և Վերափոխման պատկերաւ կարմիր եագութ կամ էլմաս քէօսթէկիվ և Նափորտն է մարգարտէ և Աւետման պատկերով և Վակասն եւս է ականակուռ և մարգարտէ և Եմիփորոնն է ճերմակ սթօֆայի վրայ սրմալո բազմապատկերով և Փորուրարն է սրմալու և մարգարտաշար երկոտասանիւք զարդարեալ հանդերձ կլապտան սաչախով և մէկ ճերմակ սատէ սթօֆայ շապկով որ ի Յիշատակարան իւր գրեալ է այսպէս. — Ի փառս սրբոյ պատարագին կերտեցաւ թագս հանդերձ բազմապատկեր Եմիփորոնիւ, մարգարտաշար Վակասիւ ի վայելումն աշակերտի Տեառն Յովհաննու Պատրիարքի Բաղիշեցոյ, Յարութիւն Արքեպիսկոպոսի, յես անցմանն յիշատակ սրբոյ Յակոբայ ի յերուսաղէմ ի թուին ՌՃԶԷ 1187+551=1738 և յՕղոստոսին Ա. ին»:

Ներկայիս Մայր Եկեղեցին ունի բացի շատ մը հին ու արժեքաւոր գոյքերէ, եպիսկոպոսական խոյր մը իր կազմածներով, զոր նուիրած է Կարապետ Պատրիարք:

Մայր Եկեղեցւոյ կսակները

Մայր Եկեղեցին բացի Պեղձեան Յարութիւն ամիրայի կտակէն, ընդունած է նաև կարգ մը բարեպաշտներու կտակներն ալ. ասոնց մէջ յիշատակելի են Կարապետ Պատրիարքի և Ալէմտաղցի Տ. Յարութիւն քահանայի կտակները: Այդ կտակներուն մէջ բաժիններ սահմանուած են նաև վարժարաններու, վանքերու, ևլն. Ահա այդ կտակներուն մէկ ցուցակը, զոր քաղեցինք Մայր Եկեղեցւոյ գանձատան մէջ պահուած կտակներու տետրակէ մը.

Հաստատեալ	Կառակեալ գումար	տրկն- շահ
ձէվահիրճեան Խաչատուր աղա	1849 Յնվ. 1	10000 720
Կարապետ Պառիարք Նախկին	1848 Յնվ. 1	12500 600
Ալէմտաղցի Տ. Յարութիւն	1860 Յն. 1	14000 1150
Պեղազ Ղազարոս Յարութիւնեան	1850 Ապր 10	1 խնթ. 500
Փիշմիշեան Նազր Տիկին	1868 Մրտ. 1	10000 960
Աղլաղանեան Պօղոս աղա	1868 Մրտ 24	10 անգ. Բնօրտ. 110
Տ.Կ. Արտաշ Փոփազեան (Տ. Յակոբ ըն ի աղջիկ)	1875 Փետ. 4	1 տուն 1000
Տիկ. Մարտ Գ. Բրիտանուստույեան	1878 Ապր. 14	— 100
Դարամանճեան Մհտ. Գարրիկ	1864 Մյս. 28	10000 480
Խազէզ Յովսէփ	1860 Մյս. 1	2500 180
Գուանեան Մհտ. Տիրուհի	—	— 190
Մհտ. Արշակ Մարտիրոսեան (1)	1854 Ապր. 20	30000 1440
Տօղրամանի Թորոս Խաչատուրեան	1878 Օգո. 10	— 140
Տ. Յարութիւն Վանանդեցի	1857 Սեպ. 27	3000 180
Տիկ. Զիւլյուրուշ ծն. Աղասի Խօրանճեան.	185 Յիւ. 27	5000 420
Նազմեան, Յովհ. աղա եւ հանգ. կո- ղակից Մարիանէ եւ վերջի կինը՝ Խ- կունի (2)	1859 Հիտ. 20	120000 6000
Ունճեան երկու եղբայր	1879 Մրտ. 31	— 120
Տիկ. Մարինոս Յակոբ Թովմասեան սուկերից	1857 Նոյ. 11	15000 1260
Բիրէճճի Մանուէլեան ոսկրչ. Բիւզանդ	1868 Մրտ. 12	15000 1800
Ալէմտաղցի Տ. Յարութիւն ընթի երէցիկին	1860 Յնս. 10	13000 1100
Տիկ. Մարթա Խաչատուրեան Վանեցի	—	1000 30
Սումաքէշ Յովհաննէս Մանուէլեան	1869 Դեկ. 15	2 խնթ. 500
Բիրէճճի Մանուէլեան ոսկերից Բիւ- զանդի ժառանգորդ	1868 Մրտ. 12	15000 900
Տիկ. Տիրուհի Յարութիւնեան (Թուա- կանք արած)	Սեպ. 15	— 133
Զէմէլքճի Սամուէլ Յովհաննէսեան եւ Չարուհի Յակոբեան	1880 Նյս. 5	— 100
Մհտ. Աստուածատուր Հիւսեան. ձե- ռամբ Տ. Արսէն ընթի	1891 Սուրբ. Օտալար 2 սենեակ	130

(1) Այս կտակին կտակարար կարգուած է եէնիգարուի Տ. Խաչատուր ըն. Տ. Գարրիէլեանը:
(2) Այս կտակը վարչութեան կողմէ վերստին քննուած է 1877 Նոյ. 19ին եւ տետրակին 26րդ էջին վրայ սրբագրուած եւ կրկին գրուած է զոյց արուելով կտակեալ գումարը 482 ոսկի եւ տարեկան շահը 2880 դրոշ:

Բացի մէկէն, միւս բոլոր կտակներու կտակագատար կարգուած է Մայր Եկեղեցւոյ Թագ. Խորհուրդը:

Մայր Եկեղեցւոյ հին գրչագիրները

Վերը յիշած էինք Մայր Եկեղեցւոյ յատուկ կարգ մը գրչագիրներ, որոնք այսօր գոյութիւն չունին. գուցէ զանազան հրդեհներու ատեն այրած կամ կորսուած է: Եւ սակայն այսօր գանձատան մէջ պահուած կայ քանի մը գրչագիր աւետարաններ: Ասոնցմէ մէկը գրուած է ՌՃԿԳ (1164+551=1715). այս գրչագրին յիշատակարանին մէջ այդ թուականներուն եկեղեցւոյն այրած և այս Աւետարանին գողցուած ըլլալը կը յիշէ. բայց կըր եկեղեցին նորէն կառուցուեր է, Աւետարանը կրկին նուիրուեր է նոյն եկեղեցւոյն Տիմրիկցի Տ. Գրիգորի որդի Տիրացու Յովհաննէսի և այլոց կողմէ և նոյն ատեն Ս. Աստուածածին եկեղեցւոյն միւթէվէլլին է կղեր Ղազար մահ. տեսի Խաչատուր, որ խնամով պահեր է սոյն Աւետարանը:

Կայ նաև գրչագիր փոքրագիր հին աւետարան մ'ալ 18x12 սանթիմէթր մեծութեամբ: Գիրքին սկիզբը զարգարուած է Ս. Աւետարանի զանազան զեպքերը յիշեցնող 14 գեղանկ որ պատկերներով, որոնց կը յաջորդեն Աւետարանին համարարատը ներկայացնող 10 ցուցակներ՝ բացատրութեամբ միտաին: Չննք գրուեր թէ այս Աւետարանը ո՞վ նուիրած է Ս. Աստուածածին եկեղեցւոյ. բայց անոր յիշատակարանը բաւական հետաքրքրական ըլլալով նոյնութեամբ հոս կ'արտատպենք: Թէև այս յիշատակարանին մէջ յիշուած պատմութիւնը՝ Մայր Եկեղեցւոյ հետ առնչութիւն մը չունի, սակայն բանասիրութեամբ զբաղողներու կրնայ օգտակար ըլլալ: Ահա այդ յիշատակարանը.

Փառք անսկիզբ եւ անգոյգական, անհոսկան, անսրբաշարական, միապատկան, անսանելի, անհնարելի, անհասանելի, անխնամալի, անպարագելի, անծիւղանալի, աներբ, անուր, անուրակ, անհալ, անբաժանելի սուրբ Երուզուրեան, յախտանալ յախտելից, անհն.

Աստուծոյ գրեցաւ եւ գրաւ առեալ կասարեցաւ սուրբ քառս հոգեւորէն, սասնածագարդ, սասնածախօս սուրբ աւետարանիս, զոր ամենասուրբ հոգին հանգչելով յերսեայի աւետարանիս ընդ հաւատափիւս որոսս սիւզիւրաց յոյս շահացուցին եւ զկարոտքիսն իմ զօրացուցին եւ յաւատ հասուցին եւ զի անվաճառքեանք սարակուսեալ զհաւապագօր զեզեռիի, քանզի անկիրք գաղով ի մեսցս եւ յիմաստիցս զոր սեպի, զի զքնականն ոչ ունէի զկրքական ոչ ժողովցի եւ ըստ իմում չար գործոցն շնորհակալիս չեմ արժանի Այլ սպաւիկեալ յայն որ զկարս զօրացուցանէ կար մարմնով եւ զոգոյց մեղոք սկսալ աղօթիս արքոց եւ ողորմութեանք Աստուծոյ աւարտեցի զսուրբ Աւետարանս, ի Դաւարիս, ի դռնն Սուրբ Լուսաւորչի մեղաք Պօղոս Երթոյ. ի քունքեռութեան Աստուծոյն եւ Արքեպական տունարի Ռ. եւ Ճ. եւ քանի (1120+551=1671), ի խնդրոյ սասնածասի մահեսիս Զաքարիայ Դաւիթայիս, որ ստացաւ զսա ի հալալ ընչից եւ յարդեանցն եւ կո յիշատակ ի Կրեքսկ կղզին, ի քաղաքն Կանսիս. ի դռնն Ս. Յովնաննէս Կարապետիս եւ Մկրտչիս, վասն խնդրոյ զոր Յակոբ քանանայիս, եւ ի սր Յակոբն այս ի Կոստանդնուպոլսոյ եւ յայտ ամի եկեալ ի Կրեքսկ կղզին ի հետ օրտոյնի, յասն օրտոյնի հետ կեալ ի քաղաքն Կանսիս, քանանայագործութիսն առնելոյ. եւ առեալ զաղաքն՝ եւ մեկալ ի մէջ քաղաքիս եւ սրեցին զաղաքն. եւ առնն ազգի մէկ եկեղեցի շնորհեցին եւ մեր Հայոց ազգին զայս սուրբ Յովնաննէս եկեղեցի եւ ի սր Յակոբս ի հետ կոստիս եւ մեկալ ի քաղաքն եւ զշնորհեալ եկեղեցին առեալ եւ նրսաւ եւ յետոյ զոր Յակոբ այս քուրթ յիւրաց ի Կոստանդնուպոլսոյ եւ խնդրեալ ի մահեսիս Զաքարիայ Դաւիթայիս Ս. Աւետարանն եւ Ս. Սօր տօնացոյց մի եւ ըստ ըստ խնդրոյ նորին յօմար կամօք եւ սրտ սիրով առեալ զսուրբ Աւետարանն ի հալալ արդեանցն եւ յիւրաց ի Կոստանդնուպոլսոյ ի Կրեքսկ կղզին ի քաղաքն Կանսիս ի դռնն սուրբ Յովնաննէս Կարապետիս եւ Մկրտչիս ի յիշատակ իւր հոգոյն եւ իւր ծնողացն Գրիգորիս Բասիլիս եւ կողակցին Եղիսարեքիս եւ մեծ սպապոյն Զաքարիայիս եւ ողորմութիսն եւ մեծ մատոյն Եկեղեցիսն եւ մորթոյն եւ կորսացն Պօղոսիս, Աստուծասուրբիս եւ Եղիսարիս եւ քրեցն Կոստանդնուպոլսոյ, Անեալիս, Մարիամիս, Եկեղեցիսն եւ Նազարիս, աներոցն Պաղիս եւ զոքոքիսն Փաշայիս եւ որդոյն Յովնաննէսիս եւ Երեմեայ Զեկեպուն. նաեւ հատօրէն զարմիցն եւ ամենայն արեան մեծաւորացն առհասարակ ամենեցուն կեկեղանեացն եւ հանգուցիւրցն: Արդ աղալիս զարագան եւ զաստուծամեծ զաստ քանանայից յիշել վերագրեալ անունն ի սրտն Քրիստոսի, ի ժամաւորիցն, զի քեռուս զմնացեալ եւ զգնացեալ յանցանսն որ ընդ մեզ, չեցեացի մեղոյն սուրբ մաղթանօք եւ ողորմութեան ցօղիկն անճրեանցի ի շարսնայի յասկեալ մեր առ ի քունքեանցն յօրն անեղեկի վերանալ ընդ Քրիստոսի: Զի եւ ինքն Քրիստոս զյիշողից եւ զյիշեցեալիս առ հասարակ արժանի արտացի երանաւտ ճայիկն, ի փառս ամենագօր անունն խոյն եւ նմա փառք ընդ Հօր խոյնն եւ սուրբ Հոգոյն. ամեն. Հայր մեր:

Մայր Եկեղեցւոյ Բահանաները

Մայր Եկեղեցին ըլլալով կեդրոնն եւ Պատրիարքանիստ, մանաւանդ երեք եկեղեցիներու համար, անհրաժեշտ էր 30է աւելի քահանաներու ներկայութեան: Ասոր վրայ աւելցած էր նաեւ շրջակայ Գումգարուի Գուրաի, Ենիքարուի եւ Կէտիք Բաշայի եկեղեցիներն ալ, որոնք միացեալ էին, եւ մաս մը քահանաներ հերթով կը պաշտօնավարէին այդ եկեղեցիներուն մէջ ալ: Տակաւին մօտիկ անցեալի մէջ Մայր Եկեղեցւոյ երեք տաճարներն ալ ժամերգութիւնն եւ Պատարագ կը մատուցուէին եւ գաւառացի ու Պոլսեցի հաւատացեալներ կը լեցնէին այս տաճարները: Այլ Եկեղեցին ունեցած է շատ ազդեցիկ ու պատկառելի քահանաներ, մանաւանդ աւագերէցներ եւ աթոռակալներ որոնք խիստ ախաճախնդիր էին եկեղեցական կարգապահութեանն ու աւանդական սովորութեանց պահպանման: Նշանակելի է աւագերէց Տ. Սուքիաս քհ. պաշտօնավարութիւնն, որ թէեւ խիստ բայց օգտակար եղած է: Արդի աւագերէց Տ. Տրդատ Ա. քհ. Պօյաճեան իր նախկին լծակիցներուն արժանաւոր եւ տիպար յաջորդն է. որ իր անբասիր կեանքովն ու ժողովրդեան խկական հայր կոչուելու արժանաւորութեամբ սիրուած է բոլոր Հայ ժողովուրդէն ու սզգ շրջանակներէն եւ մասնակցած է շատ մը ժողովներու, արգիւնաշատ գործունէութեամբ մը վաչկերով համակրութիւնն ու վստահութիւնը եկող գացող պատրիարքներու եւ բարձրաստիճան եկեղեցականներու:

Գործախտարար հինն ի վեր չէ կազմուեր քահանայից կանոնաւոր ցուցակի մը շարունակութիւնը: Մայր Եկեղեցւոյ գանձատան մէջ գտնուեցաւ տետրակ մը, որ կը պարունակէ 1829 թուականին Մայր Եկեղեցւոյ մէջ պաշ-

տօնավարող քահանայից մէկ ցուցակը՝ իրենց հովուած
ժողովրդեան քահակով: Ահա այդ ցուցակը.

Մահտեսի Մեծ Տ. Պաղտասար	213
Տ. Սարգիս Աւագեան	345
Տ. Վարդան	158
Տ. Պօղոս	230
Տ. Անդրէաս	91
Մահտեսի Տ. Պետրոս	137
Մահտեսի Տ. Կարապետ	344
Տ. Վրթանէս	99
Գասրմփաշացի Տ. Ստեփան	122
Տ. Ներսէս	69
Տ. Գաբրիէլ	32
Տ. Բարսեղ	260
Պալաթցի Տ. Գրիգոր	224
Տ. Առաքել	152
Փոքր Տ. Սարգիս	171
Տ. Յովակիմ	165
Տ. Արիստակէս	245
Մահտեսի Տ. Մինաս	199
Տ. Մովսէս	196
Տ. Խաչատուր	248
Տ. Մատթէոս	68
Փոքր Տ. Ստեփան	257
Տ. Գրիգորիս	38
Դերձակ Տ. Գրիգոր	63
Տ. Սիմօն	49

Տ. Զաքարիա	44
Տ. Մարկոս	161
Տ. Ղուկաս	---
Տ. Մինաս	125
Սարաֆեան Տ. Պետրոս	52
Տ. Սահակ	36
Ալէմտաղցի Տ. Յարութիւն	265
Տ. Նիկողայոս	108
Տ. Յովհաննէս	34
Դերձակ Տ. Միքայէլ	27
Փոքր Տ. Պաղտասար	80
Տ. Մկրտիչ	177
Տ. Մարտիրոս Աթոռակալ	---

Զարմանալի է որ այս քահանաներէն երկուքը ծուխ
ունեցած չեն. ասոնք ինչպէս կ'ապրուէին, յայտնի չէ:

Իսկ 1864ին Մայր Եկեղեցւոյ Թաղ. Խորհրդոյ ատե-
նագրութեանց մէջ կը գտնենք հետեւեալ քահանայից
ցուցակը.

Տ. Բառնաբաս
Տ. Յակոբ Տ. Առաքելեան
Մահտեսի Տ. Յովհաննէս, փոխ աւագերէց
Տ. Պօղոս Երից Եղբարց
Յ. Յովսէփ
Տ. Դանիէլ Մարտիրոսեան
Տ. Եփրեմ Մկրտիչեան
Տ. Աթանաս Կարապետեան
Տ. Եղիա Ասլանեան

- Տ. Բարսեղ
 Տ. Գաբրիէլ
 Տ. Մելքիսեղ Յովհաննէսեան
 Տ. Կարապետ Կարապետեան
 Տ. Պաղտասար Յակոբեան
 Տ. Երեմիա Երամեան
 Տ. Մատթէոս Տ. Մատթէոսեան
 Տ. Խորէն Մե ռոնեան
 Տ. Ահարոն Գէորգեան Խորշահեան
 Տ. Մովսէս Առաքելեան
 Տ. Ռափայէլ Ղազարոսեան
 Տ. Անդրէաս Համբարձումեան
 Տ. Ռէթէոս Միրայէլեան
 Տ. Սուքիաս Ստեփանեան
 Տ. Ստեփան Պետրոսեան
 Տ. Սիմոն Նիկողոսեան Վիշապեան
 Տ. Յուսիկ Մինասեան
 Տ. Խաչատուր Տ. Քաբրիէլեան
 Տ. Եղիշէ Սերէնեան
 Տ. Բարթոլղիմէոս Պողոսեան
 Տ. Յովհաննէս Փոքր
 Տ. Թադէոս

Քանի որ խօսքերնիս հին քահանաներուն վրայ է, կ'արժէ հոս յիշել զէպք մը որ տեղի ունեցած է Ազրիանուպոլսեցի Պողոս Պատրիարքի օրով: Հին ատեն սովորութիւն էր, երբ քահանայ մը վախճանէր, անոր ծուխերը կը յանձնուէին Պատրիարքին և ան ալ իր ուզած քահանային կուտար զրամի փոխարէն ու նկատողութեան


չէր առնուեր վախճանեալ քահանային պարտքերուն, եթէ ունէր, վճարումը: Պողոս Պատրիարք դեռ Պատրիարքական աթոռը չի բազմած, մտերիմ քահանայի մը հետ այս անիրաւ սովորութեան դէմ կը խօսի և կը խոստանայ երբ Պատրիարք ըլլայ՝ վերցնել այս ապօրէն սովորութիւնը և իր այս խոստումը յարգելու համար ինքնագիր թուղթ մըն ալ կուտայ նոյն քահանային: Այս խոստումը բնականքը մեծ ուրախութիւն կը պատճառէ բոլոր քահանաներուն, որոնք կ'աշխատին Պողոսի պատրիարքութիւնը յաջողցնել: Յետոյ երբ իր խոստումը կը յիշեցուցուի Պատրիարքին, ոչ կարեմք կ'ըսէ և ժողով մը գումարել տալով անիրաւ կը հանէ քահանաները: (Տես Պատ. Աւետիս Պէրպէրեան, էջ 95—97):

Ժամանակին Պատրիարքներ խիստ նախանձախնդիր էին քահանայից պարտականութեանց մասին և ամէն առաւօտ կանուխ կ'իջնային եկեղեցի. քահանաներ պարտաւոր էին ներկայ ըլլալ: Առաւօտ մը Աստուածատուր Պատրիարք կը տեսնէ որ քահանաներէն մին չէ եկած, անմիջապէս ժամկոչին միջոցաւ դադաղ մը կը զրկէ զանցառու քահանային տունը, հասկցնել ուղելով որ, մեռած կը համարուի, քանի որ թերացած է իր պարտականութեան մէջ:

1884ին կը գտնենք վերեւ յիշուած քահանաներէն շատեր ողջ, իսկ այդ թուականէն մինչեւ այսօր քահանայից ցուցակը հետեւեալն է.

- Տ. Սիմոն Աժտէրխանեան
 Տ. Իզնատիոս Խաչատուրեան
 Տ. Սարգիս Տ. Սարգիսեան
 Տ. Արիստակէս ձիզմէնեան
 Տ. Արսէն Յովսէփեան
 Տ. Հմայեակ Յովհաննէսեան

- Տ. Պաղտասար Բարթիկեան
 Տ. Սահակ Փանոսեան
 Տ. Գարեգին Ղազարոսեան
 Տ. Յակոբ Փափազեան
 Տ. Գրիգորիս Պուչազճեան
 Տ. Փիլիսպոս Փափազեան
 Տ. Միքայէլ Աշճեան
 Տ. Դաբրիէլ Էքսէրճեան
 Տ. Պօղոս Խաչատուրեան
 Տ. Պետրոս Յակոբեան
 Տ. Բառնաբաս
 Տ. Եղիա Կարապետեան
 Տ. Սարգիս Զօհրապեան
 Տ. Կարապետ Ստեփանեան
 Տ. Յովակիմ
 Տ. Դանիէլ
 Տ. Սթանաս (կարգազուրկ)
 Տ. Վարդան Դերձակեան
 Տ. Խորէն Վարդանեան
 Տ. Ղեւոնդ Սուրխասեան (կարգազուրկ)
 Տ. Գէորգ Պազայեան
 Տ. Սուրբիս Արիստակէսեան
 Տ. Եղիազար Տ. Բարթողիմէոսեան
 Տ. Տրդատ Պոյաճեան (արդի աւագերէց)
 Տ. Պետրոս Կարապետեան
 Տ. Արշէն
 Տ. Գիւտ Չաբրրեան
 Տ. Դալուստ Պօղոսեան
 Տ. Պարգև Միրզախանեան



Մայր Եկեղեցւոյ ներկայ Քահանայից Գառ
 Մեջեղը Տ. Տրդատ Ա. Քնն. Պոյաճեան Աջ կողմը Տ. Եղիազար Քնն. Բաբողիմէոսեան և Տեր
 Գիւտ Քնն. Չաբրրեան Չախ կողմը Տ. Դալուստ Քնն. Պոյաճեան և Տեր Պարգև Քնն. Միրզախանեան

Տ. Գալուստ քն. Կէտիք Փաշայի եկեղեցւոյն վրայ,
իսկ Տ. Պարգիւ քն. Սամսոնի եկեղեցւոյն վրայ թէլեւ ձեռ-
նագրուած են, սակայն ի վերջոյ ընդունուած են Մայր
Եկեղեցւոյ Քահանայից Դասուն մէջ: Տ. Գալուստ քն-
ներկայիս եկեղեցւոյ լուսարարագիտութիւնն ալ կը վարէ:

Թաղ. Խորհուրդներու ցրան

Մինչև Գերագոյն Ժողովոյ ղաղարումը՝ եկեղեցական,
կրթական և բարեգործական հաստատութիւնները կը
յանձանձուէին միւթէյլէլիներու և անոնց ներկայացու-
ցիչներու ձեռքով (1860): Բայց Պատրիարքարանի կանո-
նագրին սահմանումէն յետոյ թէլեւ մէկ երկու Թաղ. Խոր-
հուրդներ կազմուած են, սակայն այդ կանոնագիրը 1863
Մարտ 27ին դաժն ըլլալով իր պաշտօնական վաւերացումը,
ինչպէս միւս եկեղեցիները, նոյնպէս Մայր Եկեղեցին ալ
ունեցաւ ժողովրդային քուէարկութեամբ իր առաջին
Թաղ. Խորհուրդը, որու անդամ ընտրուեցան 1863 Յլս. 12ին.

- | | |
|------|----------------------------|
| Տիար | Պողոս Վարդանեան |
| » | Յակոբ Արշակ |
| » | Դէորդ Զարգարեան |
| » | Մատթէոս Այվատեան |
| » | Սերովբէ Անուխեան |
| » | Համբարձում Ալթունեան |
| » | Պողոս Ժամակոչեան |
| » | Գրիգոր Մկրտիչեան Կիւմիւշճի |
| » | Սահակ Մամիկոնեան |
| » | Միքայէլ Մամիկոնեան |
| » | Պողոս ձիլանեան |
| » | Բարթողիմէոս Թօգաթլեան |

Այս խորհուրդին առաջին դործը կ'ըլլայ Պեղձեան և Լուսաւորչեան վարժարաններու բարեկարգութեան խընդիրը ու իր մէջէն կը կազմէ հինգ հոգինոց հոգաբարձութիւն մը: Կարելի չէ չի յիշել հոս թէ, այս վարժարանները տուած են ազգին օգտակար անհատներ՝ մտաւորական, առեւտրական, բժշկական և յն. , նոյնիսկ կաթողիկոս, պատրիարք, որոնց անունները թուել երկար կ'ըլլայ: Այս թաղ. Խորհուրդը ըմբռնելով աշխատութեան բաժանման օգուտը, իր մէջէն մասնախումբերու կը յանձնէ, բնութիւնով վարժարանին հոգատարութեան համար 3, եկեղեցւոյնութեան, այսինքն եկեղեցւոյ հասոյթից յաւելման համար 4, երեսմտից տեսչութեան համար 3 անձեր: Դժբախտաբար այս շատ գովելի եռանդը շատով կը մարի ունից անտարբերութեան և ունից հրաժարմանց պատճառաւ և քիչ ժամանակ յետոյ կ'ընտրուի նոր մարմին մը հետեւեալներէ.

Տիար	Աբրահամ Հարինց
»	Աստուածատուր Գէորգեան
»	Մատթէոս Այլատեան
»	Գաբրիէլ Փափազեան
»	Պօղոս Ժամակոչեան
»	Յարութի ն Սմբատեան
»	Յովասափ Բարաղամեան
»	Առաքել Բացախեան
»	Գրիգոր Մկրտիչեան
»	Գրիգոր Գարամաթոսեան
»	Սարգիս Պէրպէրեան
»	Գէորգ Զարդարեան

Այս մարմինն ալ զանազան անհամաձայնութեանց պատճառաւ կը հրաժարի և 1867 Յունիս 4ին կը կազմուի

առժամեայ մը, որ երկու տարի կը պաշտօնավարէ և 1869 Յուլիսին ժողովրդային քուէարկութեամբ նոր խորհուրդ մը կ'ընտրուի հետեւեալ կերպով.

Տիար	Մելքիսեդ Տ. Եղիազարեան
»	Ռուբէն Էպէեան
»	Պօղոս Ճիլաճեան
»	Կարապետ Կոտեմեան
»	Հանի Յակոբ Թօգատլեան
»	Գրիգոր Գարամաթոսեան
»	Բարթող Բիւրքեիպաշեան
»	Գրիգոր Ոսկերիչ
»	Մկրտիչ Ուզունեան
»	Աբրահամ Տամկասեան
»	Կարապետ Մալկարալեան
»	Միքայէլ Փափազեան

Այս թաղ. Խորհուրդը հազիւ 6 ամիս կեանք կ'ունենայ և 1870ին նոր մը կը կազմուի քուէարկութեամբ և այս անգամ նախորդէն կարգ մը անձեր կը վերընտրուին: Այս մարմինը իր օրինական պայմանաժամը կը լրացնէ 1874 Մայիսին և կը յաջորդէ նորը.

Տիար	Յակոբոս Նարկիլէճեան
»	Կարապետ Աղարթմաճեան
»	Սարգիս Զրաճեան
»	Մարկոս Ալաճաճեան
»	Պօղոս Ժամակոչեան
»	Զաքար Գալբազճեան
»	Գրիգոր Պէրպէրեան


- Տիար Մելքիսեդ Տ. Եղիազարեան
- » Գրիգոր Կարապետեան
- » Յովսէփ Մազլումեան
- » Մկրտիչ Ուզունեան

Այս թուականէն մինչեւ այսօր շատ մը թաղ, Խորհուրդներ ընտրուած են՝ ոմանք քուէարկութեամբ, բայց մեծաւ մասամբ անօրինակ կերպով, որոնք իրենց օգտակարութիւնը ունեցած են. նշանակելի են Յարութիւն էֆ. Մոստիշեանի, Սեպուհ էֆ. Բլատեանի և այլ կարեւոր անձանց ատենապետութեանը տակ գտնուած թաղ, Խորհուրդներու գործունէութիւնը եկեղեցւոյ և վարժարանին մատակարարական գործին մէջ:

Արդի թաղ, Խորհուրդը, որ շնորհիւ թուրք Հանրապետական Կառավարութեան բարեհաճ թոյլտուութեան, ժողովրդային ազատ քուէարկութեամբ ընտրուած է տարւոյս Մայիսին, և կազմուած է հետեւեալներէ.

- | | |
|--------------------------|------------|
| Տիար Յարութիւն Համբարեան | Ատենապետ |
| » Յակոբ Գրալեան | Ատենաղալիր |
| » Յովհաննէս Փրիկեան | Գանձապետ |
| » Գառնիկ Սարգիսեան | Անդամ |
| » Լեւոն Բամպուրճեան | » |
| » Արտաշէս Ունճեան | » |
| » Լեւոն Խանճեան | » |
| » Սրամ Շիրինեան | » |
| » Պաղտատար Ծառուկեան | » |

Այս թաղ, Խորհուրդը իր պաշտօնի ձեռնարկած օրէն եռանդեամբ փարած է գործին և կ'աշխատի եկեղեցիին պայծառութեանը և վարժարանին յառաջդիմութեանը:



Մայր եկեղեցւոյ արդի թաղ, Խորհուրդը

Նստած Աջէն Տեարժ Թարուքիւն Համբարեան Լեւոն Բամպուրճեան Յովհաննէս Փրիկեան Կեցած Աջէն Տեարժ Պաղտատար Ծառուկեան Գառնիկ Սարգիսեան Յակոբ Գրալեան

Մայր Եկեղեցւոյ Հարիւրամեայ Յորելինական հանդէսներուն կազմակերպութիւնը իր և Պատ. Քահանայից Դասուն բարի մտածմանն արդիւնքն է: Բարեբախտութիւն մըն է որ իրենց օրին կը պատահի այսպիսի կարեւոր Յուրելեան մը:

* * *

Մայր Եկեղեցւոյ Թաղ. Խորհուրդներու վրայ խօսած ատեննիս, կ'արժէ հոս յիշատակել պարագայ մը, որ բաւական երկար ատեն զբաղեցուցած է 1897 և 1899ի Թաղ. Խորհուրդները և Ազգ. Պատրիարքարանը: Այս Խորհուրդը նոյն թուականներուն հասոյթներու անբաւականութեան և կայուածներու վարձուց նուազութեան պատճառաւ, չի կրնար վճարել իր վրայ պարտադրուած կտակարածիները և կը դիմէ Պատրիարքարան: Խառն Ժողովը 1897 Դեկտ.ին խառն յանձնաժողով մը կը կազմէ որու կ'անդամակցին Խառն Ժողովէն Տ. Յովսէփ Ծ. Վ. Այվազեան և Միհրան էֆ. Սեթեան, Տնտեսական Խորհուրդէն Նշան էֆ. Փափազեան, Մայր Եկեղեցւոյ աւագերէց Տ. Միքայէլ քհն. Աշճեան, Մայր Եկեղեցւոյ Դպրաց Դասէն Միհրան էֆ. Տ. Ահարոնեան, Գումգաբուի Դուրսի և Գարթալի Թաղ. Խորհուրդներու ներկայացուցիչներ՝ Աթանիկ կարապետեան և Աւետիս ձէրահեան էֆ.ները: Դեկտ. 11ի առաջին նիստին մէջ, որ գումարուած է նախագահութեամբ Օրմանեան Ս. Պատրիարքին, Ն.Ամենապատուութիւնը սկզբունք մը մէջտեղ կը հանէ, այսինքն կ'ըսէ թէ՛ «պէտք է քննել կտակի մը թողած նիւթն ու արտադրած հասոյթը, եթէ նիւթը ոչնչացած է, կտակն ալ ինքնին կ'ոչնչանայ. հետեւաբար պէտք չէ ուրիշ կտակի մը նիւթը խառնել, ոչնչացած կտակի մը նիւթին»:

Այս յանձնաժողովը քանի մը անգամ կը գումարուի, քայց խնդիրը անլոյժ կը մնայ: 1899ին նոր քննիչ մարմին մը կը կազմուի քննելու Պեղճեանի և այլոց կտակները: Օրմանեան Ս. սակայն 1899 Յունիս 28 թուական կոնգակաւ մը հաստատելով Պեղճեան Ամիրայի կտակին բնոյթն ու օրինաւորութիւնը, կը վերահաստատէ և կը յանձնարարէ այդ կտակին անթերի գործադրութիւնը, հրաւիրելով շահագրգոռողները իրաւախօհութեամբ կարգադրել հաշիւներնին: Բարեբախտաբար ի վերջոյ Թադ. Խորհուրդը կը յաջողի կարգադրել խնդիրը և կը սկսի վճարել կտակաբաժինները: կտակընկալ հաստատութեանց մինչեւ ցայսօր:


Ահաւասիկ Օրմանեան Պատրիարքի կոնդակը:



ՄԱՂԱՔԻԱ ՊԱՏՐԻԱՐԿ
1896 — 1908

1830 աւարտեալ էր շինութիւնն, այլ կոյին տակաւ պարտք ոչ սակաւ, զի հասանէր գումարն զհազար և եօթն հարիւր քսակս դրամոց որք են սեթտուն և հինգ բիւրք դահեկանաց: Տեսեալ ասնն մեծի զնուազութիւն նստիրաց ի վճարումն պարտոց, կամեցաւ յիւրմէ անտի առատա ձեռնել և զայդ գումար մնացուածոց, այլ իմաստուն երկրեզածութեամբ կամեցաւ տայ զայն յանուն փոխատուութեան, եղեալ ի վերայ պայմանս տոկոսեաց և զվայելումն տոկոսեացն սրոշեաց յօգուտ հաստատութեանց առ յինքնէ նշանակելոց: Այդ իսկ է հիմն և իսկութիւն Պեղ Տեան կտակաց հաստատելոց ի Մայր Եկեղեցւոջ մայրաքաղաքիս:

Առաջինն ի սոցանէ ունի զթուական 28 աւուր ամսեանն Փետրուարի 1830 ամի, հաստատեալ ստորագրութեամբ և կնքով երջանկայիշատակ Պատրիարքին Տ. Կարապետի և այլոց քսան և ինն անձանց ի գլխաւորաց ազգիս յեկեղեցականաց և յաշխարհականաց, ուր բանք են միայն զգումարէ հազար երկերիւր քսակաց, որոց տոկոսիք հաշուին դահեկանք երեք հազար, այսինքն է դահեկան երկու և կէս առ իւրաքանչիւր քսակ, և գումար տոկոսեաց բաշխի հազար մի յօգուտ Աւսումնարանին զիտութեան, և հազար մի Դպրատան ազքատ մանկանց, և հինգ հարիւր Դպրատան ձայնաւորին և դարձեալ հինգ հարիւր Դպրատան նարթալու: Մնացեալ գումար հինգ հարիւր քսակաց գտանի նշանակեալ ի յաւելուածոյն և հաստատեալ յառաջին աւուր Յուլիսի 1833 ամի, ստորագրութեամբ և կնքով երջանկայիշատակ Պատրիարքին Տ. Ստեփաննոսի և քսան և երկուց անձանց ի գլխաւորաց եկեղեցականաց և աշխարհականաց, և չափ տոկոսին հասանէ ի դահեկանս հազար, որ է երկու դահեկան առ մէն մի քսակ, որոյ և բովանդակն սահմանեալ է յօգուտ Պոզոսեան և Վառվառեան վարժարանաց, որք արտաքոյ գրան Գումագաբուի: Պարունակութիւնք կտակագրիս գտա-



Մայր - Եկեղեցւոյ Դպրաց Գասուն Երեկայ կազմը

նին վաւերացեալ առանձինն սահմանադրութեամբք, զորս Տ. Գարապետ և Տ. Ստեփաննոս լուսանօգի Պատրիարքունք հաստատեալ են առանձինն, սահմանելով զպայմանս գործադրութեան տոկոսեաց և զմատակարարութիւն վարժարանաց:

Կամք Պեղծեան բարերարին նուիրականք են իբր կտակ, և առաւել իսկ քան զկտակ վասն մեծամեծ երախտեաց մեծահաւատ միշտ նովին համեմատութեամբ տոկոսեաց չորից առ հարիւր:

Չայդ զոր սրտչեցաքս հաստատեմք գործադրել, ի սկզբքանէ ներկայ 1899 ամի, այլ, եթէ գոն տոկոսիք անվճարք ցարդ և պարտք զիղեալք, վասն այնոցիկ յանձն առնեմք իրաւով ո՞ն համաձայնութեամբ զիրացոց ցանկ զգործն զի անցեալ են և ժամանակք, և նուազագոյն իսկ լեալ իսկապէս ծախքն որոց սահմանեալ էին վճարելի տոկոսիքն, վասն այսորիկ երկոքին կողմանք պարտին միանգամայն ընդ միշտ համախոհութեամբ փակել զհաշիւն, մանաւանդ վասն ճշդութեան տպագայ ժամանակաց և կանոնաւորութեան հաշուոց:

Որչափ ինչ գրեցաքս ի մասին հաշուոց և վճարմանց չունին ստնանել իւրիք հոգեւորական պարտուց և պաշտամանց որք կատարին վասն հոգևոյ բարեյիշատակ և բազմերախտ ահիրային: Չիք պայման և ոչ մի ի կտակողիրան, այլ պահի բարեպաշտ սովորութիւն ի սկզբանէ անտի և ամբ ամէ զինի Պատարագի մեծահանգէս աւուր Զատկի Յարութեան կատարի պաշտօն Հոգեհանգստեան ի վերայ գերեզմանին նորին ի Գաւթի Մայր Եկեղեցւոյ, և կամիմք և հրամայեմք զի այս կանոն պահեցի անխափան, և գերեզման բարեյիշատակ Յարութիւն Ամիրայի Պեղծեան, օրհնեցի հանապաղ յաւուր Զատկի մեծահանգէս շքով յիշելով Սրբոյ Պատարագի հանդիսադրութեամբ Պատրիարքին և ներկայութեամբ թովանդակ Ուխտի Եկեղեցւոյն և

ամենայն ժողովրդեան և Տէր Յիսուս հանգուցէ զնա ընդ արդարս ի փառս յաւիտենից. ամէն:

Տուեալ ի Պատրիարքարանէ Հայոց, յամի Տեառն 1899
և յաւուրն 28րդի ամսեանն Յունիսի:

ՄԱՂԱՔԻՍ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ


Պատրիարք Կ. Պոլսոյ

* * *

Աւելորդ չըլլայ հոս յայտնել թէ, Պեղճեան վարժա-
րանի և Դպրաց Դասուն վրայ ընդարձակօրէն չենք խօ-
սած, զորձը աւելի չընդարձակելու համար, տրուած ըլլա-
լով որ այս երկու հաստատութիւնները, նրոնք քանի մը
զարու գոյութիւն ունին, կը կարօտին ընդարձակ ու-
սումնասիրութեանց և մասնաւոր հետազոտումներու:



Մայր - Եկեղեցւոյ Գորաց Դասուն նորակազմ Գորքան նրջախումբ



Վ Ե Ր Ջ Ա Ր Ա Ն

նի
կա
նո
նո
թ
զ
կ
ն
ա

Ահա ամփոփ կերպով պատկերացուցինք Պատրիարքա-
առայս հնադարեան եկեղեցւոյ պատմական անցեալն ու
րկան: Այս կրօնական հաստատութիւնը մեծ յիշատա-
րանն է հայ բարեպաշտիկ զգացումներու և արդիւնք՝
որ քրիստոսանուէր հաւատքին, ուր հարիւր հազարա-
ւոր հաւատացեալներ սերունդէ սերունդ գտած են իրենց
գիր, սրտի և խղճի անդորրութիւնը և մխիթարութիւ-
ն: Այս հոյակապ և գեղակառոյց եկեղեցիին վերաշինու-
եան հարիւրամեայ Յոբելեանի հանգիստութիւնները, որ
կախ կատարուին, ցոյց կուտան ժողովրդանուէր Թուրք
նրապետական կառավարութեան պաշտպանութիւնը
ունքի և խղճի ազատութեան ու ասոր համար երախտա-
արտ է Հայ Ազգը, որ զարերով կապուած է Թուրք ազ-
գեղին հետ: Մասնաւորաբար շնորհաւորելի է ներկայ
Պատրիարք Հայրը, Նարոյեան Տ. Մեսրոպ Արքեպիս-
կոս, որուն Պատրիարքութեան բարերաստիկ օրին կը
նդիպի տօնել այս Հարիւրամեայ Յոբելեանը: Կը մաղ-
նք որ, զարերու մէջէն յիշատակ մնացած այս եկեղե-
պանէ իր տեւականութիւնը տակաւին շատ մը սե-
նդներ և դարուց ի դարս:



Վ Ր Ի Պ Ա Կ

Էջ 46, առջ երրորդ. «վարձարան» պետք է կարդալ «վաճարան»

«Ազգային գրադարան»



NL0165705

